№ 57 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 17 **1897** ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 17 № 57

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
հերթականութիւնը բառին 2 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Լ. սամկար Գրիգոր Տէր-Ղեւոնդեան և իր ամուսինը՝ Թագուհին, որդոց հետ միասին, սրտի ցաւով յայտնելով առաջինները իրանց անդրանիկ թանկագին որդու, միւսները՝ իրանց եղբօր՝

Վ. Ա. Հ. Ա. Ն Տ Է Ր-Ղ Ե Ւ Ո Ն Դ Ե Ա Ն Ի

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին՝ չնորհ բերել յուղարկաւորութեանը, շաբաթ, ամսոյս 17-ին, առաւօտեան 10 ժամին, սեփական տնից, Ա.ճալեան փողոց, № 36, դէպի Վանքի մայր եկեղեցին: Ամբիծքը կը կատարվի ամեն օր, երեկոյեան 7 ժամին: 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրողներին. Հանօտօ և Արևելքի գործերը. —ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրվայ օր. Տգեղ երևոյթներ. Գիւղատնտեսական զրոյցներ. Նամակ Գօրայ. Նամակ Բազուից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմի դաշտից. Պարիզի ազգի առիթով. Թիւրքիայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քար եփեցէք.

ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ

—

Վաղը, մայիսի 18-ին, Թիֆլիսի քաղաքային հաւաքաւոր ընտրողները հրաւիրվում են կատարել իրանց քաղաքացիական խոշոր պարտաւորութիւններից մէկը.—ընտրել ազգաբնակութեան ներկայացուցիչներ, ձայնաւորներ դումայի համար:

Մեր դումայի ընտրութեան պատմութեան մէջ, որքան գիտենք, սա առաջին անգամն է, որ կազմակերպվել են, եթէ ոչ լայն, որոշ սկզբունքներով զեկավարվող կուսակցութիւններ, բայց գոնէ որոշ խմբեր, որոնցից իւրաքանչիւրը հանդէս է գալիս՝ ձայնաւորների որոշ ցուցակով, ձգտելով որքան կարելի է դէպի այդ ցուցակը դրաւել շատ թւով ընտրողներ, աշխատելով որքան հնարաւոր է ժողովրդականացնել այդ ցուցակը:

Մենք շնորհաւորում ենք ընտրողական այդ եւրօպական ձևը, որի ջերմ պաշտպանն ենք եղել մենք, և որի դէմ տարիներ առաջ աղաղակ էին բարձրացնում նոյն իսկ շատերը այն անձինքներից, որոնք այժմ իրանք, անձամբ մասնակից են այդ տեսակ ագիտացիայի և ցուցակներ կազմելուն: Շնորհաւորելով այդ քայլը, մենք պարտք ենք համարում ասել ընտրողներին. „Վաղը դուք, պարոններ, պէտք է դաղտնի քուէով կատարէք ձեր խօսքը, որ տուել էք այս և այն ցուցակի համար: Ձեզ վրա բարոյական պարտք կայ չը շեղվել ձեր տուած խօսքից, չը խաբել, և դաղտնի քուէով հաստատել այն, ինչ որ դուք խոստացել էք բացարձակ խոստումով, ազնիւ խօսքով:“

Մենք ասում ենք այդ խօսքերը, որովհետև եղել են տխուր փաստեր, երբ մեր ընտրողները դաղտնի քուէարկութեան ժամանակ դաւաճանել են իրանց ազնիւ խօսքին: Նրանք մոռացում էին այսպէս. „Քուէարկութիւնը դաղտնի է. ով պէտք է իմանայ. շատ էլ խօսք եմ տուել“ և հիմնվելով այդ խարդախ մոռացութեան վրա՝ տուել են սպիտակ նրանց, որոնց սև պէտք է տային, և սև այն անձանց, որոնց սպիտակ էին խոստացել... Եւ ընտրողական խարդախութեան հետևանքները եղել են շատ տխուր, շատ տգեղ...

Ժամանակ է, որ մեր ընտրողները քաղաքացիական աւելի հասունութիւն ցոյց տան: Եւ մեզ համար աւելի քան հաճելի կը լինի երկու օրից յետոյ արձանագրել, որ կովկասեան մայրաքաղաքի բոլոր ազգութիւնների ընտրողներկայացուցիչները չը դաւաճանեցին իրանց ցուցակներին, և դաղտնի քուէարկութեան ժամանակ էլ հաւատարիմ մնացին իրանց տուած բացարձակ խօսքին:

ՀԱՆՕՏՕ ԵՒ ԱՐԵՒԼՔԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Հանօտօ շարունակում է ջերմ կերպով պաշտպանել թէ Ֆրանսիայի և թէ եւրօպական պետութիւնների քաղաքականութիւնը արևելեան հարցում: Յոյն-թիւրքական պատերազմի առիթով Ֆրանսիական պատգամաւորների ժողովում եղած հարցապնդումներին Հանօտօ պատասխանեց մի երկար ճառով, որի մէջ, ի միջի այլոց ասաց հետևեալը.

„Ես կարծում եմ, որ չափազանցութիւն է խօսել եւրօպական միջամտութեան անաջողութեան մասին հէնց այն վայրկենին, երբ նա նոր է սկսվում, „միջազգային ընդհարման“ բարդվելու վայրկենին: Ընդհակառակը, մեծ պետութիւնները աշխատում են հէնց այդ բարդութիւնները և միջազգային ընդհարումը խափանել և մինչև այժմ նրանց այդ աջողվել է: Առաջին անգամ ենք տեսնում, որ հասել է վաղուց նախատեսված ժամը, երբ մենք կը ցանկայինք խօսել չափաւորութեան, խոհեմութեան և մարդասիրութեան լեզուով: Կարելի է միթէ այդպիսի պայմաններում ասել, թէ դիպլոմատիան անաջողութիւն է կրել, և թէ մեծ պետութիւնների կօնցերթը միայն ֆիկցիա է: Այն բարձր նպատակը, որին ձգտում են մեծ պետութիւնները, դարձաւ ընդհանուր խաղաղութեան խարիսխ: Պետութիւնները հէնց այդ տեսակէտից վստանդաւոր էին համարում յուսանական զօրքերի ներկայութիւնը Կրետէում: Եւրօպական կօնցերթը աշխատում էր խափանել տեղական ընդհարումը, որի հետևանքները ամենքը, դժբաղդաբար, նախատեսում էին: Թէև պետութիւնները չը կարողացան խափանել այդ պատերազմի բռնկումը, բայց նրանք կարողացան գոնէ սահմանափակել այդ պատերազմը և այժմ էլ, իրանց անմիջական պարտաւորութեան համաձայն, աշխատում են թեթևացնել նրա հետևանքները յաղթվածների համար: Ընդհանուր խաղաղութեան և statu quo-ի պահպանութիւնը Արևելքում, խաղաղ և միահամուռ միջամտութիւնը խաղաղութիւնը, Կրետէի ինքնավարութիւնը և ռէֆորմների ընդհանուր ծրագիրը առաջ տանելու գործում, այնպիսի ռէֆորմների, որոնք այլ ևս թոյլ չը տան 1895 թ. ցաւալի դէպքերի կրկնութիւնը,—ահա այն նպատակը, որ ունի Եւրօպան: Միթէ ներկայումս հնարաւոր է լուրջ կերպով մտածել, որ Արևելքը յուզող կռիվի ընդհարման ժամանակ, կարելի և գործնական լինի եւրօպական պետութիւնների մէկի կողմից որ և է միջամտութիւն: Ո՞վ կը վստահանայ այժմ հաստատել, թէ այդպիսի մի նախաձեռնութիւն ամենահամարձակ ձեռնարկութիւն չի լինի, և ո՞վ իր վրա կառնի այդ տեսակ պատասխանատուութիւն: Խնդիրը առաջվայ պէս մնում է բարդ և դժուար իրագործելի. մեզ անյայտ չեն այն դժուարութիւնները, որոնց դէմ պէտք է կռուենք ամեն մի քայլում, բայց մենք յոյս ունենք, որ խելացի խորհուրդները վերջ ի վերջոյ կը յաղթանակեն“:

Գեղեցիկ են ֆրանսիական դիպլոմատի շրթունքներից արտասանվող մարդասիրութիւն, խաղաղութիւն և համերաշխութիւն խօսքերը, բայց տարաբաղդաբար, հէնց վերջին երեք տարիների ընթացքում, երբ աւելի քան երբ և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԱՐ ԵՓԵՑԷՔ

(Աղբատի յիշատակարանից)

—

Երբ անցնում եմ հարուստների պալատանման բնակարանների մօտով՝ խիստ յուզվում եմ և արտասուքը խեղդում է ինձ: Այդ աւելի զգալի է լինում այն ժամանակ, երբ փափկասուն տիկինները նստած իրանց ամուսինների կողքին՝ լուսամուտներից նայում են դէպի փողոց, որտեղով անցուդարձ են անում աղքատները: Ես ստիպված կանգ եմ առնում և քննական հայեացքով դիտում կրեսոսների կեանքը... Աստուած իմ, որքան տարբերութիւն նրանց և աղքատների վարած կեանքի մէջ... Այդ երկու դասակարգը ապրում, շնչում է մի և նոյն արեգակի, մի և նոյն լուսնի տակ, բայց իրարից տարբեր պայմաններում: Ինչու՞: Ահա երբ այս մտքերը պաշարում են ինձ, դառն յիշողութիւններ են զարթնում իմ մէջ: Յիշում եմ մօտիկ անցեալի թողած տպաւորութիւնը: Այո՛, յիշում և սոսկում եմ: Ո՛րքան տխուր և ընդոր է իմ յիշածը, այս փոքրիկ զրոյցը, որ ահա պիտի պատմեմ:

I

Արանից մի քանի տարի առաջ—այսպէս է սկսվում աղքատի յիշատակարանը, հօրս բախտի անիրը չուռ տուեց: Նա մեր քաղաքի ամենահարուստ վաճառականներից մէկն էր: Բնաւորութեամբ և վարք ու բարքով խիստ բարի: Այո՛, նա բարի և ողորմած էր, բառիս բուն նշանակութեամբ: Ես թէպէտ և փոքրիկ էի այդ ժամանակ, բայց տակաւին յիշում եմ, քանի՞ քանի՞ աղքատներ են բաղխել մեր դուռը, հօրիցս առատ ողորմութիւն ստացել և օրհնելով հեռացել...

Բայց երկրագնդի վրա ինչ կայ անփոփոխ: Մեր բախտը փոխվեց: Առևտրական ձախորդ հանգամանքները առիթ եղան մեզ աղքատանալու. այո՛, աղքատացանք, խիստ աղքատացանք... Անցան մի քանի տարիներ, մենք մոռացվեցինք և ընկանք «ամենքից մոռացված աղքատների» դասը:

Հայրս դեռ երիտասարդ էր, բայց մաղերը ճերմակեցին: Նա անաղնիւ միջոցի չը դիմեց, որպէս սովորաբար վարվում է աղքատացողների մեծամասնութիւնը: Նա համեստ առաւ և սկսեց մշակութեամբ պարապվել մեր քաղաքում: Օրական մի քանի կոպէկներ վաստակելով՝ նա ուրախ-ուրախ տուն էր վերադառնում, իսկ մայրս ջուր էր տաքացնում և նրա ոտները լուանում: Ես և երեք փոքրիկ քոյրերս չրջապատում էինք մեր ծնողներին: Ո՛րքան էին մխիթարվում նրանք մեզանով...

Ահա այսպէս անցնում էին մեր օրերը: Բայց բախտը կարծես երդվել էր իր վերջին մահաբեր հարվածն իջեցնել մեր գլխին: Այդպէս էլ եղաւ: Հայրս սաստիկ հիւանդանալով՝ մտաւ անկողին: Մեր վիճակը աւելի և աւելի վատթարացաւ...

Անցաւ, բոլորեց ամբողջ տարին՝ բայց մեր միակ աշխատաւոր ձեռքը դեռ մնում և հալ ու մաշ էր լինում անկողնում: Ինչպիսի՜ դառը, անմխիթար և սև օրեր եկան մեզ համար: Մենք ստիպված անելանելի հանգամանքներից՝ եղած չեղածներս կիրակիները դուրս էինք բերում շուկան և ամենաէժան գնով վաճառում... Կարճ ժամանակից յետոյ մենք այլ ևս ոչինչ, ոչինչ չունէինք... Մեր աղքատութիւնը հասել էր իր գագաթնակէտին: Թշուառ և ծանր վիճակ:

Մայրս, մեր տան միակ յոյսը սկսեց ողորմութիւն խնդրել: Ես դեռ յիշում եմ ինչպէս միասին շրջում էինք փողոցներում և ողորմութիւն խնդրում անցուդարձ անողներից: Ողորմութիւն խնդրել, զզվելի արհեստ. բայց գոյութեան խընդիրը ստիպում էր, ով կարող է մեզ մեղադրել...

II

Առաւօտ էր: Ես և մայրս կանգնած փողոցում՝ ձեռք էինք մեկնում հարուստներին, որոնք կառքերով այս ու այն կողմ էին անցնում: Այդ պահուն մի պարոն, փաթաթված տաք մուշտակում՝ կառքով անցնում էր: Մայրս ձեռքը մեկնեց դէպի նրան: Պարոնը նայեց... կառքը կանգնեցնել տուեց, և դարձաւ դէպի մեր կողմը:

—Ո՞վ էք դուք:

—Դուք ճանաչում էք մեզ, պատասխանեց նրա հարցին մայրս:

Արդարև նա ճանաչեց մօրս: Պարոնը հօրս ամենամտերիմ ընկեր վաճառականներից մէկն էր: Մտերիմ այն ժամանակ միայն, երբ մենք էլ հարուստ էինք... Մայրս, ինչպէս յետոյ ասաց ինձ,—շատ անգամ էր նրան ընդունել մեզ մօտ և չքեղ կերպով հիւրասիրել: Խեղճ իմ մայր, այժմ նրանից ողորմութիւն էր խնդրում:

—Քոյրիկ, ճաչից յետոյ կարող էք գալ ինձ մօտ. ես կը հոգամ ձեր մասին, անհոգ եղէք, ասաց նա և ծառային հրամայեց կառքը քչել: Նա գնաց: Նրա խօսքերը մեզ նոր կեանք, նոր ուրախութիւն պատճառեցին: Շտապեցինք տուն և եղելութիւնը յայտնեցինք հօրս:

Վերջինս, որ հաղիւ թէ կարողանում էր նրատել անկողնում, խիստ ուրախացաւ և վերկացաւ նստեց անկողնի մէջ:

—Փառք Աստուծոյ, երևի հասել է երախտագիտութեան ժամը. ես այդ պարոնին չատ անգամ եմ օգնել. բայց փոխարէնը չը ստացայ: Երևի նախախնամութիւնը ազդել է նրա անզգայ սրտին և այսօր նա փափագում է իր բարոյական պարտքը հատուցանել...

—Գնացէք, սիրելիներ, Աստուած մեծ է, ասաց հայրս յուզված ձայնով և կրկին պառկեց...

Ճաշից յետոյ մօրս հետ միասին գնացինք դէպի պարոնի տունը:

Սկզբում ծառան ուզեց մեզ վռնդել: Մենք նրան հասկացրինք, որ պարոնի հետ գործ ունենք: Նա գնաց իր տիրոջ մօտ և մի քանի բառերից յետոյ վերադառնալով՝ թոյլ տուեց մեզ սանդուղքներով վեր բարձրանալ: Մենք մտանք պարոնի մօտ: Աստուած իմ, ինչպիսի՜ չքեղութիւն, քանի՞ քանի՞ թանգագին առարկաներ կային այդտեղ, որոնք լոկ զարդարանքի տեղ էին ծառայում...

—Դուք էք. շատ բարի՞. համեցէք ներս, քաղաքավարութեամբ ասաց նա և տեղից վեր կենալով՝ մօրս հրաւիրեց միւս սենեակը: Մայրս դողդողալով հետևեց նրան... Իսկ ես պարոնի պատէրի համաձայն ստիպված էի սպասել: Երկար ժամանակ անցաւ, բայց նրանք չը վերադարձան: Ես արդէն յոգնել էի. նստել չէի համարձակվում: Ոտներս սկսեցին խիստ ցաւ զգալ: Յանկարծ միւս սենեակից աղաղակ լսվեց: Ես իսկոյն ճանաչեցի մօրս ձայնը, որ ասում էր՝

—Սպասի՛ր, միայն չեմ դաւաճանի. դու, պարո՛ն, հարուստ ես, այդ գիտենք. բայց քո փայլուն սպիտներով մեր, աղքատներիս պատիւը կընել, ինչպէս հրապարակների և չուկաների ապրանք, չես կարող...

—Մայրիկ, ես այստեղ եմ, մի վախենար, գո-

իցէ ամեն մի դիպլոմատի բերանից այդ խօսքերն էին լսվում, տեղի ունեցան այն սոսկալի կոտորածները և ընդհարումները, որոնք միանգամայն անհեռացրին մարդասիրութեան և խաղաղութեան վերջին նշոյլներն անգամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷ ՅՕՐ

XVIII

Կ. Պոլսի Թիւրքաց «Սաղահ», «Հաղիգաթ» և «Իգդամ» լրագիրները, որոնց ուղղութիւն տուողները ոչ թէ խմբագիրներն են, այլ Բ. Դրան պաշտօնեաները, միջից կէս են լինում հաւատացնելու, որ եթէ Թիւրքաց կառավարութիւնը յետ տայ Թէսալիան, անմիջապէս օսմանեան կայսրութեան բոլոր կողմերում հակակառավարական մեծ ցոյցեր կը լինեն, և սուլթանի իշխանութիւնը կը կոտրվի մահմէտական ժողովրդի աչքում։—Դա այն զէնքերից մէկն է, որով այժմ Բ. Դուռը ուզում է ճնշում գործ դնել Կ. Պոլսի օտար դեսպանների որոշումների վրա։

Ի մեծ դժբաղդութիւն թէ սուլթանի և թէ Բ. Դրան՝ Կ. Պոլսի եւրօպական դեսպանները, երկար տարիներով ուսումնասիրած լինելով Թիւրքիան՝ մի բան շատ լաւ գիտեն,—նրանք գիտեն, որ Թիւրքիայում չը կայ ժողովրդական կարծիք և ժողովրդական ձայն, այլ միայն սուլթանի կամքը, միացած հոգեորականութեան, կամ աւելի լաւ է ասել շեյխ-իւլ-իսլամի կամքի հետ։ Մի քանի տարի է արդէն, որ օսմանեան մինիստրները մեծ յամառութեամբ ուզում էին հաւատացնել Եւրօպային, որ Թիւրքիայում տեղի ունեցած բոլոր դէպքերը հետևանք էին և են ժողովրդի և ամբոխի անմիջական ինքնաբեր յուզման և զրգռման, անկախ կառավարութեան ցանկութիւնից, նոյն իսկ հակառակ այն հրամանների, որոնք տրվում են կամ Կ. Պոլսի, կամ տեղական վալիների կողմից։ Բայց այսօր այդ կարծիքը վերջնականապէս հերքված և ջախջախված է նոյն իսկ պաշտօնական զեկուցմանների, որոնք այլ ևս կասկած չեն թողնում, որ Թիւրք ամբոխը ոչինչ չէ արել և չէ անում՝ առանց իշխանութեան կարգադրութեան...

Տարիների ընթացքում երևան եկած անթիւ փաստերից յետոյ՝ մի երեխայական ձգտումն է Կ. Պոլսի Թիւրք մամուլի կողմից հաւատացնել աշխարհին, թէ Թիւրք ժողովուրդը ղէմ է Թէսալիան Յունաստանին վերադարձնելուն, և ուրեմն եթէ սուլթանը կամենայ էլ, չէ կարող այդ քայլն անել։ Մահմէտական ժողովուրդը նոյնքան մասն ունի օսմանեան կայսրութեան կառավարական բարձր կարգադրութիւնների մէջ, որքան հայերը՝ Բ. Դրան որոշումների մէջ, և այդ պատճառով, բարձրից ներշնչված թիւրք զրոյների հայրենասիրական ցանկութիւնը՝ կիսալուսնի տիրապետութիւնը տեսնել Թէսալիայի վրա՝ պէտք է համարել մի երազ, որով ներելի է ոգեորվել միայն դիշերները, հարեմական զուարճութիւնների ապաւորութեան ներքոյ, բայց ոչ ցերեկը...

Հարցնում ենք. երբ, որ դէպքում և ինչ աւիթով թիւրքաց լրագիրները պաշտպանութիւն ցոյց տուին ժողովրդի կամքին, կամ երբ նրանք սովորեցրին այդ ժողովրդին անկախ մտածել և կարծիք յայտնել, որ այսօր այնքան վստահ կերպով խօսում են ժողովրդական ցանկութեան մասին, հակադրելով այդ ցանկութիւնը նոյն իսկ սուլթանի իշխանութեանը։ Եթէ թիւրք դիպլոմատները կամ մինիստրները չը գիտեն, բայց թիւրքաց զրոյները և լրագրութիւնը պէտք է գիտենան, որ Թիւրքիայում չը կայ ժողովուրդ։ Մահմէտական արևելքը ժողովուրդ չէ ճանաչում։

Խ. Մալումեան

ՏԳՆԴ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

(Նամակ Դաւառից)

II

Մեր գիւղական ժողովրդի բարքերի անկման խոշոր ապացոյցներից մէկն էլ վրէժխնդրութեան այն եղանակն է, որ վերջին տարիներս ծաւալ է առնում հայոց գիւղերում։ Ժամանակակից հայ գիւղացին մարդ սպանել չը գիտէ, արիւնից նա շատ է վախենում, ախր արիւն թափելը ծանր բան է. իսկ հայը այնքան զգոյշ է, որ այդպիսի փորձութեան չի ենթարկի իր «թանդարին» կեանքն ու աղաւութիւնը, քանի որ նա շատ լաւ գիտէ, որ արիւնը հեշտ է բռնվում և հետևանքը ծանր է լինում։ Եւ ինչու «արունքանել», երբ դրա փոխարէն նա կարող է այլ եղանակով այնպէս վրէժ առնել, որ մի մարդու փոխարէն տաս մարդ սպանել կը նշանակէ, առանց իրան օրէնքի արդարութեանը մատնելու։ Փոյթ չէ, որ իր ընտրած միջոցը ստոր է, և կանացի բնաւորութիւն ունեցող ժողովրդին յատուկ։

Կիրակոսը մերժել է Թորոսին տալ իր աղջիկը՝ կամ «գեղամիջում» «խալխի» առաջ ծանր խօսք է ասել, և ահա վերջինս վիրաւորված վերցնում է իր խէնչարը կամ կացինը և իր նման մի քանի կնամարդի ընկերների հետ գնում է գիշերով իր հակառակորդի այգին և խաւարի մէջ կատարում է մի ցած, մի պժգալի գործ. նա մէկիկ-մէկիկ կոտորում է իր հարևանի այգին։ Բայց գիտէք ինչ է նշանակում այգի կատարել. քանի տարիներ, որքան աշխատանք ու հոգս է պէտք եղել, մինչև որ գիւղացին կարողացել է այգին հասցնել, «բարի բերել», և ահա չարագործի մէկը մի գիշերվայ մէջ ոչնչացնում է նրա՝ տարիների դառն աշխատանքի պտուղները, նրա զաւակների ապրուստի աղբիւրը։ Թշուառ գիւղացին առաւօտն այգի է գնում և նրան ներկայանում է մի արտասուելի տեսարան. պտղատու ծառերն ու խաղողի վազերը ղիակների պէս փռված են այգում. խղճալին արտասվում է, ասես իր զաւակներն են կոտորված. և մթթէ զաւակների ապրուստը ոչնչացնել, նրանց սպանել չէ՞ նշանակում։ Իսկ տգամարդութիւնից զուրկ, կնամարդի չարագործը... նա հրճվում է, նա հասաւ իր նպատակին։

Գիւղացին վարել է իր արտը, վաղը միւս օրը հատիկներ պիտի ցրվի խոր-խոր ակօսների մէջ, այդ հատիկներն են նրա յոյսն ու ապաւէնը։ Նա հանգիստ քնած է այժմ, գիշերը, բայց թշնամին քնած չէ. նա հէնց այդ խաւարին էր սպասում, որ ասես գալիս է աշխարհ պատում նրա համար, որ չարի սկզբունքը յաղթանակի, և ահա չարագործը վերէ կենում և դաշտ գնում. բահի մի քանի հարուած բոլորովին բաւական է, որ ջրի պատուարը քանդվի և քնած գիւղացու ցելը ջրով լցվի մինչև լոյս։ Չարագործը տուն է վերադառնում և հանգիստ քնում. փոյթ չէ, որ այսուհետև հոդատիրոջքունը կը փախչի. նա ցանելու տափ չունի, մինչև ջուրը չորանայ, ցանելու ժամանակը կանցնի. ինչ պիտի ուտեն զաւակներն ու իր անասունները... Մարդասպանութիւն չէ՞ սա...

Սուրմալիում ձմեռ ժամանակ ջրաղացները չեն գործում ջրերի սառելու պատճառով. և ահա ջրաղացատէրերի հակառակորդները օգտվելով այդ հանգամանքից՝ գիշերով գնում են անմարդաբնակ ջրաղացը և մէկիկ մէկիկ ջարդում քարերը։ Եւ ինչ հեշտ գործ. կռանի մի քանի հարուածներ և վրէժը լուծված է. հոգին զուրս գայ տիրոջը, թող գարնանը նորից սարը գնայ, քար կարել տայ, կոփի և իւրաքանչիւր զոյգի համար 30—40 ռուբլի ծախսելով և տաժանելի աշխատանքով բերի ջրաղացը կարգի դնի։

Սոյնանման անարգ սիրագործութիւններ վերջին տարիներս անընդհատ կատարվեցին փանիկ հայ գիւղում. բայց ինչպէս որ ամեն մի ազգ ունի ալիքներին, որոնք ուժգնութեամբ զարկվելով ափերին, փչրում, ոչնչացնում են ամեն ինչ...

Մայրս չը դիմացաւ. նա էլ սկսեց արտասուք թափել։ Բայց ես և փոքրիկ քոյրերս ոչինչ չէինք հասկանում։ Միայն մեր ծնողների վիճակը՝—բնականաբար ազդում էր նաև մեր մանկական անմեղ սրտերի վրա...

Այդ պահուն ներս մտաւ մեր տանտիրուհին, որ մի գեղեցիկ և բաղդաւոր կին էր։ Նա չը բարեհաճեց մեզ ողջունել. դրա փոխարէն կոպիտ կերպով գոռաց.

—Դուք, անիրաւ աղքատներ, երբ պէտք է վճարէք ձեր պարտքը։

Մայրս նրան պատասխանելու փոխարէն մի խուր հայեացք գցեց նրա կողմը։

—Ինչու էք լռում, լիրբ ու կեղտոտ աղքատներ, երեսի ուզում էք դուրս վռնդեմ...

—Տիրուհի, ոչինչ չունենք. ժամանակը դեռ չէ լրացած, սպասեցէք. տեսնում էք, որ երեխաներս սոված թափվել են մերկ գետնի վրա...

—Լռիր, անիրաւ ու անամօթ, գոռաց հօրս վրա տիրուհին և գնալով դէպի փոքրիկ քոյրերիս կողմը—բացականչեց՝

—Այս ինչ է, ստախօս աղքատներ։

—Տիրուհի, ի սէր Աստուծոյ, ձեռք մի տայ. այնքան հարստութիւնից այդ մէկ հատ հնամաշ գորգն է մնացել. թողէք մնայ իր տեղում. չէ՞ որ երեխաներս դրա վրա են մթնացնում իրանց սև օրը...

—Դուք, գարշելի աղքատներ, փող չէք տալիս, փող, հասկանում էք. ես այս գորգը կը տանեմ ի հաշիւ փողի տոկոսի, ասաց նա և գորգի ծայրից բռնելով այնպէս ուժգնութեամբ քաշեց, որ քոյրերս թափվեցին խոնաւ յատակի երեսին...

—Տիրուհի, այդ ուր ես տանում. մենք ինչ անենք, աղերսեց մայրս։

—Քար եփեցէք, պատասխանեց տիրուհին և գորգը առնելով դուրս գնաց։

Անգութ մարդիկ...

IV

Այդ հոյակապ տունը, որի ներքևի յարկի ամենախոնաւ սենեակներից մէկում ապրում էինք մենք, մեր սեփականութիւնն էր մի ժամանակ։ Այն օրերում—երբ բաղդը ժպտում էր մեզ իր կեղծաւոր երեսով—մենք ապրում էինք այդ պալատանման շինութեան վերին յարկում։ Բայց երբ անգութ բաղդի երեսից հալածվեցինք, մեր սեփականութիւնը անցաւ ուրիշի ձեռքը, իսկ մենք նեռվեցինք խոնաւ, մութը նկուղներից մէկը... Մեզ խոստացան թոյլ տալ տան տարի ձրիաբար ապրելու այդտեղ, բայց ամիսը դեռ չը լրացած մեզանից տան վարձ պահանջեցին։ Որքան անխիղճ են այդ հարուստները, որոնց խոստումները ոչինչ նշանակութիւն չունեն։

—Ո՛հ, այլ ևս տանել չեմ կարող այսքան զըրկանքները. օգնիր, Թագուհի, հագնվել եմ ուզում, նուազ և լացախառն եղանակով ասաց հայրս,—տանտիրուհու դուրս գնալուց յետոյ։

—Ո՞ւր պէտք է գնաս։

—Երեխաներիս մահը աչքերովս չեմ ուզում տեսնել. թող գնամ, կորչեմ. ախ, ինչու հայր եղայ ես. Աստուած իմ...

Մայրս սկսեց լաց լինել։ Հայրս յուզված ձայնով դարձաւ նրան։

—Սիրելի, մի յուսահատվիր, օգնիր հագնվեմ։ Թէպէտ և ուժերս սպառվել են, բայց երեխաներիս աղաղակը իմ թուլացած, ցամաքած երակների մէջ նոր արիւն են հոսեցնում։ Այս-

Նոր տարի, նոր կեանք, բայց ոչ աղքատների համար...

Յունվարի առաջին օրն էր։ Եղանակը ցուրտ. փչում էր բքաբեր քամին. ձիւնը երկնքից առատութեամբ մաղվում էր։ Քամին քաղաքի ամեն մի ծակ ու ծուկ լցրել էր ձիւնով։ Մեր հարևանները, քաշված իրանց տները, հանգիստ և ուրախ կեանք էին անցկացնում։ Իսկ մենք։ Որքան դժբաղդ արարածներ են աղքատները։ Երկինքն անգամ կարծես երես է դարձնում նրանցից։ Նա ես ճնշում, հալածում է բաղդի երեսից հալածվածներին... Մենք վառարան ունէինք, բայց փայտ չը կար։ Փոքրիկ քոյրերս մատն հնամաշ և պատառոտված անկողինը, սոված փորով և ճնշված ձայնով աղաղակում էին՝—մայրիկ հաց, սոված ենք, սոված... բայց որտեղից հաց գտնէինք։ Նա սրբութեան պէս մի հաղւագիւտ բան էր դարձել մեզ համար. փոքրիկները կրկին աղաղակեցին.

—Մայրիկ, ախար մրսում ենք, սոված ենք, ինչու հաց չես տալիս։

Արդարև նրանք յարգելի պատճառներ ունէին. երկու օր էր, որ ոչինչ չէին կերել։ Նրանք մըրսում՞ էին, որովհետև տաք հագուստ չունէին,—անկողին նոյնպէս. վառարան ևս չը կար։ Կարծես այդ դեռ բաւական չէր. քամին բոլորի պակասը լրացնելու համար՝ ձիւնը պատերի ճեղքերով բերում և թափում էր ներս, որով սենեակը աւելի և աւելի էր ցրտում...

—Մայրիկ, մրսում ենք, երրորդ անգամ աղաղակեցին փոքրիկները։ Նրանց ձայնը հայրս լսելով՝ սկսեց լսելի ձայնով հեկեկալ անկողնի տակ։ Հայրական սիրտ, ինչ ես դու։ Նրա ներսը ալեկոծվում էր, և այն աղի արտասուքը, որ թափվում էր նրա աչքերից, նմանվում էին ծովի կատաղի ալիքներին, որոնք ուժգնութեամբ զարկվելով ափերին, փչրում, ոչնչացնում են ամեն ինչ...

—Ցիրուհի, այդ ուր ես տանում. մենք ինչ անենք, աղերսեց մայրս։

—Քար եփեցէք, պատասխանեց տիրուհին և գորգը առնելով դուրս գնաց։

Անգութ մարդիկ...

IV

Այդ հոյակապ տունը, որի ներքևի յարկի ամենախոնաւ սենեակներից մէկում ապրում էինք մենք, մեր սեփականութիւնն էր մի ժամանակ։ Այն օրերում—երբ բաղդը ժպտում էր մեզ իր կեղծաւոր երեսով—մենք ապրում էինք այդ պալատանման շինութեան վերին յարկում։ Բայց երբ անգութ բաղդի երեսից հալածվեցինք, մեր սեփականութիւնը անցաւ ուրիշի ձեռքը, իսկ մենք նեռվեցինք խոնաւ, մութը նկուղներից մէկը... Մեզ խոստացան թոյլ տալ տան տարի ձրիաբար ապրելու այդտեղ, բայց ամիսը դեռ չը լրացած մեզանից տան վարձ պահանջեցին։ Որքան անխիղճ են այդ հարուստները, որոնց խոստումները ոչինչ նշանակութիւն չունեն։

—Ո՛հ, այլ ևս տանել չեմ կարող այսքան զըրկանքները. օգնիր, Թագուհի, հագնվել եմ ուզում, նուազ և լացախառն եղանակով ասաց հայրս,—տանտիրուհու դուրս գնալուց յետոյ։

—Ո՞ւր պէտք է գնաս։

—Երեխաներիս մահը աչքերովս չեմ ուզում տեսնել. թող գնամ, կորչեմ. ախ, ինչու հայր եղայ ես. Աստուած իմ...

Մայրս սկսեց լաց լինել։ Հայրս յուզված ձայնով դարձաւ նրան։

—Սիրելի, մի յուսահատվիր, օգնիր հագնվեմ։ Թէպէտ և ուժերս սպառվել են, բայց երեխաներիս աղաղակը իմ թուլացած, ցամաքած երակների մէջ նոր արիւն են հոսեցնում։ Այս-

---

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

VI

Օիդիում—«Oidum»—Զոռ

Գործածվելիք ծծումբի քանակութիւնը։ Գործածվելիք ծծումբի քանակութիւնը որոշելու համար պէտք է ի նկատի ունենալ հետևեալ հանգամանքները. 1) որքան տեղ է հարկաւոր բժշկել և 2) հիւանդութիւնը շատ է տարածված, թէ քիչ։ Ոչ պակաս նշանակութիւն ունի ծծումբի տեսակը, փուքսի կազմուածքը և բանաւորի հմտութիւնը, նոյնպէս և այդու մշակութեան ձևը (այդու կազմակերպութիւնը)։

Ենթադրենք, որ հարկաւոր է բժշկել մի դեսիատին, որի վազերը խիստ վարակված են, փուքսը շատ լաւ սիստէմի է, մշակը վարժ չէ և վազերը տնկված են մէկ մէկուց հեռու։ Սոյն պայմաններում մէկ դեսիատինին կերթայ՝

			ծծումբի փոշի
Առաջին անգամ	շաղ տալիս		1 պ. 10 ֆ.
Երկրորդ անգամ	»	»	2 պ. 20 ֆ.
Երրորդ անգամ	»	»	3 պ. 10 ֆ.

Ընդամենը 3 անգամ փչելու համար մի դեսիատինին 7 պուդ։ Եթէ ծեծած ծծումբ գործածվէր՝ կը գնար մօտ 9 պուդ։ Երևանի այգիները զուտ խաղողի վազերով չեն զբաղեցրած, այլ այգու չորեք կողմը և մէջերքում տեղ-տեղ լայն ալէաներ են թողնված, որտեղ ցանում են առոյտ (եոնջա) և տնկում են պտղատու ծառեր, այնպէս որ այգու մի երրորդը միշտ էլ պարապված է այլ մշակութեամբ. դրա համար եթէ այգին երեք դեսիատին է, պէտք է ծծումբի հաշիւը տեսնել երկու դեսիատինի, քանի որ իսկապէս վազերի տակ կը գտնվի միայն 2 դեսիատին։ Մի փոքրիկ ծանօթութիւն ևս։ Քանի որ Երևանի այգիների մեծ մասի տարածութիւնը, աննչան բացառութեամբ, որոշվում է ոչ թէ դեսիատինի չափով, այլ տեղական «թանաֆ» չափով, հարկ ենք համարում ասել, որ մի թանաֆը մօտաւորապէս ընդունում են իբրև՝ հաւասար $1/2$ դեսիատինի, կամ մի դեսիատինը հաւասար է 2 թանաֆի։

Ծծումբ փչող գործիքներ և փուքս։ Բազմաթիւ գործիքներ են հնարված ծծումբ

ռացի ես երեխայական պարծենկոտութեամբ և գնացի դէպի միւս սենեակը, որտեղից դուրս վազեց մայրս և դառնալով դէպի ինձ ասաց.

—Ե՛կ, որդիս, հեռանանք այս պիղծ և անպիտան հարստի տնից...

Մենք շտապ քայլերով դուրս եկանք փողոց։ Արտասուքի կաթիլները ողողում էին մօրս գունատ դէմքը։ Նա լաց էր լինում։ Բայց ինչու։ Թէպէտ և ես այն ժամանակ չէի կարող իմանալ մօրս լաց լինելու պատճառը, բայց մանկական հոգիս արդար բարկութեամբ վրդովվում էր՝ տեսնելով մօրս հոգեկան դրութիւնը...

—Մայրիկ, այն չուն-պարոնը քեզ ծեծեց, ինչու լաց ես լինում։

—Այդ յետոյ կասեմ, որդիս. հօրդ ոչինչ չասես։

—Ինչու։

—Նա ծանր հիւանդ է. եթէ յուզվի—կարող է մեռնել։

—Եթէ այդպէս է, չեմ ասի։

—Ապրես, խելօք որդիս։

—Մայրիկ, ապա ինչ պէտք է ասենք հայրիկին, չէ՞ որ նա մեզ սպասում կը լինի։

—Կասենք տանը չէր, կարճ պատասխանեց մայրս։ Խեղճ իմ մայր։ Ես այժմ, միայն այժմ հասկանում եմ այդ կծու խօսքերի նշանակութիւնը։ Ա՛խ. ինչ կը լինէր, եթէ այն ժամանակ ես հասկանայի այդ բոլորը, բախտաւոր կը լինէի ես...

III

Այս դէպքից անցաւ վեց ամիս։

Հայրս դեռ հիւանդ պառկած էր։ Մեր հարեւանները, թէ հարուստ և թէ աղքատ, ամենքը զարդարված, զուգված, ուրախ սրտով սպասում էին նոր տարվան. վրա հասաւ և նոր տարին։

—Ցիրուհի, այդ ուր ես տանում. մենք ինչ անենք, աղերսեց մայրս։

—Քար եփեցէք, պատասխանեց տիրուհին և գորգը առնելով դուրս գնաց։

Անգութ մարդիկ...

IV

Այդ հոյակապ տունը, որի ներքևի յարկի ամենախոնաւ սենեակներից մէկում ապրում էինք մենք, մեր սեփականութիւնն էր մի ժամանակ։ Այն օրերում—երբ բաղդը ժպտում էր մեզ իր կեղծաւոր երեսով—մենք ապրում էինք այդ պալատանման շինութեան վերին յարկում։ Բայց երբ անգութ բաղդի երեսից հալածվեցինք, մեր սեփականութիւնը անցաւ ուրիշի ձեռքը, իսկ մենք նեռվեցինք խոնաւ, մութը նկուղներից մէկը... Մեզ խոստացան թոյլ տալ տան տարի ձրիաբար ապրելու այդտեղ, բայց ամիսը դեռ չը լրացած մեզանից տան վարձ պահանջեցին։ Որքան անխիղճ են այդ հարուստները, որոնց խոստումները ոչինչ նշանակութիւն չունեն։

—Ո՛հ, այլ ևս տանել չեմ կարող այսքան զըրկանքները. օգնիր, Թագուհի, հագնվել եմ ուզում, նուազ և լացախառն եղանակով ասաց հայրս,—տանտիրուհու դուրս գնալուց յետոյ։

—Ո՞ւր պէտք է գնաս։

—Երեխաներիս մահը աչքերովս չեմ ուզում տեսնել. թող գնամ, կորչեմ. ախ, ինչու հայր եղայ ես. Աստուած իմ...

Մայրս սկսեց լաց լինել։ Հայրս յուզված ձայնով դարձաւ նրան։

—Սիրելի, մի յուսահատվիր, օգնիր հագնվեմ։ Թէպէտ և ուժերս սպառվել են, բայց երեխաներիս աղաղակը իմ թուլացած, ցամաքած երակների մէջ նոր արիւն են հոսեցնում։ Այս-

փչելու համար, սակայն ամենայարմարը փուքսն է: Փուքսը պէտք է լինի զօրեղ, որպէս զի ընդունակ լինի ծծումբի փոշին լաւ փչել և մանր թող առաջացնել. պէտք է չատ ծանր չը լինի, որպէս զի բանուորը չը յոգնի. պէտք է գործողութեան միջոցին կանոնաւոր բանի և ընդհատվելու տեղիք չը տայ: Ամենալաւ փուքսերը Մալբէկինն է և Լագլէօզինը: Համառօտ կերպով նկարագրենք Լագլէօզինը, իբրև աւելի կատարելագործված: Դա մի սովորական փուքս է, որի ձախ երեսի վրա (այդ այն երեսն է, որի շարունակութիւնը կազմում է խողովակը, և որի վրա օդի համար արված անցքեր չը կան) ամրացրած է մի մետաղեայ կօնաձև ման,—դա ծծումբը լցնելու համար է: Այդ ման մի յատակից մի խողովակ սկսում է և գնում միանում է փուքսի խողովակի հետ—փուքսի հիմքում: Փուքսի խողովակը երկար է և ծայրին շարժական կերպով հագցրած է մի տափակ, լայն ակոսներով և դունչը վեր բարձրացրած մաս: Այդ մասը նպաստում է ծծումբը համահաւասար և աւելի մեծ տարածութեամբ ցրվելուն և բացի այդ, նրա երեսը դէպի այս կամ այն կողմը դարձնելով՝ ծծումբն էլ նոյն կողմը կարելի է ուղղել: Ծծումբի ման մէջ ցածի մասում դրված է մի ցանցաւոր շրջանակ, որը չէ թողնում ծծումբին մեծ-մեծ կտորներով թափվել. բացի այդ, մի չատ պարզ, բայց հնարագէտ խառնիչի միջոցով, որը գործում է փուքսի բաց ու խուփ անելիս ինքն իրան, շարունակ խառնում և մանրացնում է ծծումբի փոշին: Քանի որ ծծումբը միանում է փուքսի խողովակի հետ, որտեղից՝ օդի հոսանքի շնորհիւ դուրս է վանդվում, դրա համար փուքսի կաչուի մասը աղատ է լինում նրա փչացնող ազդեցութիւնից, քանի որ, ինչպէս հասարակօրէն ասում են, ծծումբը կաչին ուտում է: Ծծումբի ման կարող է տեղաւորել իր մէջ մի անգամից համեմատաբար փոքր քանակութիւն. դրա համար պէտք է մի ման ունենալ ծծումբը հետը ման ածելու համար: Ահա մօտաւորապէս այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է օիդիօմի դէմ գիտակցաբար կուելու համար:

Օիդիօմի դէմ կուելու համար Երեւանում ձեռք առնված միջոցները: Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզէն անցեալ տարվայ վերջում հրաւիրելով տեղական բազմաթիւ հայ և թուրք այգեպէտներ, առաջարկեց «Կովկասի Գիւղատնտեսական ընկերութեան բաժին» բանալ Երևանում: Այգեպէտները ուրախութեամբ համաձայնվեցին: Սակայն առայժմ, քանի որ դեռ ևս «Գիւղատնտեսական ընկերութեան Երևանի բաժինը» չէ կարող գործ սկսել, կոմս Տիզենհաուզենի նախաձեռնութեամբ, այգեպէտների ժողով հրաւիրվեց և առաջարկվեց փոշ վեր դալ՝ ծծումբ և փուքսեր բերել տալու համար: Այդ անգամ ևս մեծ սիրով ընդունեցին տեղացի այգեպէտները պ. Նահանգապետի առաջարկութիւնը և արդէն 4,000 ր. կանխիկ հաւաքված է և մօտ 4,000 ր. խոստացած են տալ: Արդէն իսկ Ֆրանսիայում պատուիրված է մեծ քանակութեամբ ծծումբ և փուքսեր: Այդպիսով այգեպէտների դժուար դրութիւնը թեթևանում է, նախ որ ծծումբը էժան կը լինի և երկրորդ՝ որ յատկութիւնը նոյնպէս բարձր կը լինի բաղարում գնվածներից:

Մ. Մուսինեանց

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Մայիսի 15-ին

Մայիսի 14-ին, առաւօտեան ժամի 11-ին, Գորի եկաւ Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին: Ժողովրդի խուռն բազմութիւնը բռնել էր թէ երկաթուղու կայարանը և թէ բոլոր այն ճանապարհը, որով պիտի անցնէր նա: «Ցարսկայա» կոչված հրապարակի վրա տեղաւորվել էին հոգևորականութիւնը խաչ ու խաչվառներով, տեղական բոլոր ուսումնարանների ուսուցչական խմբերը աշակերտներով և աշակերտուհիներով և արհեստաւորաց դասակարգը՝ դրօշակներով: Իսկ այդ հրապարակից դէպի իշխան Ամիլախվարիի տունը տանող Ցարսկայա փողոցի երկու կողմերով չարէչար կանգնած էին տեղական զինուորները: Այդ փողոցի վրա գտնված տների բոլոր պատուհանները և պատշգամբները նոյնպէս բռնված էին մարդկանց բազմութեամբ:

Նշանակած ժամին հասնելով, իշխան Գոլիցին իր թիկնապահների խմբով կառք նստելով անցաւ դէպի Ցարսկայա հրապարակը, ուր նա ողջունեց հոգևորականութեան, արհեստաւորներին, ուսանող դասակարգին և ժողովրդին առանձին-առանձին: Հայոց եկեղեցական ուսումնարանի աշակերտներին մօտենալով՝ իշխանը բարևեց նրանց՝ հայերէն լեզուով «բարի լոյս» ասելով: Ապա սկսվեց հանդիսաւոր մաղթանքը, որից յետոյ իշխանը առաջացաւ դէպի կամուրջը, որի նորոգութիւնը մի չարաթ առաջ էր աւարտված: Կամուրջի օրհնութիւնից յետոյ՝ իշխանը մկրատով կտրեց ճանապարհի միջից ձգված մետաքսեայ ժապաւէնը և առաջինը ինքն անցաւ կամուրջի վրայով:

Հնչեց երաժշտութիւնը: Ապա իշխանը իր ամուսնու հետ կառք նստելով գնաց օրիորդական պրոգիմնազիան և այնտեղից իշխան Ամիլախվարիի տունը, ուր նախաճաշ վայելելուց յետոյ՝ իր թիկնապահներով միասին գնաց Լեախվա գետի ափերի վնա նոր աւարտած ամրութիւնները տեսնելու: Ցայտնի է թէ այդ գետը անցած տարին որպիսի սարսափելի վնասներ հասցրեց քաղաքին: Իշխանը երկար ժամանակ և մեծ հետաքրքրութեամբ դիտում և հարց ու փորձ էր անում այդ ամրութիւնների մասին: Գետի այդ ամրացրած ափերը ամբողջովին դիտելուց յետոյ՝ իշխանը այցելեց քաղաքի այլ հիմնարկութիւնները, ինչպէս են՝ Գորու ուսուցչական սեմինարիան, տեղական զօրանոցները և այլն: Երեկոյեան մարդատար գնացքով իշխան Գոլիցին ճանապարհվեց Թիֆլիս: Ժողովուրդը իշխանին ճանապարհ դրեց դոհ աղաղակներով:

Գորեցի

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՑ

—

Մայիսի 13-ին

Մեր «մեկ» «Մուրճ» ամսագրի խմբագիր պ. Արասխանեանց ահա քանի օր է, որ այստեղ է: Նա եկել է մի քանի յայտնի պարոններից աջակցութիւն խնդրելու՝ «Մուրճի» նիւթական մասին: «Մուրճը» երկու հազար ռուբլու չափ պարտք ունի. այդ պարքը վճարելու և ամսագրի գոյութիւնը պահպանելու համար՝ խմբագիր Արասխանեանց դիմում է փոխառութեան, տարիների ընթացքում վերադարձնելու պայմանով: Նա խոստանում է նոյն իսկ բանկային տոկոս տալ և մուրհակներով ապահովացնել փոխառութիւնը:

Մտնելով խմբագիր Արասխանեանցի խղճալի դրութեան մէջ՝ մի քանի բարեսէրներ աջողեցնում են փոխառութիւնը. 500-ական ռուբլի տալով, չորս հոգի լրացնում են «ճակատագրական» երկու հազար ռուբլին: Խմբագիր Արասխանեանց գոհ սրտով ստանում է ժողված գումարը և թռչում իր բնակաւեղին, եռևից թողնելով մի մութ գիծ...

Խմբագրի բարեսիրտ կրեդիտորների հետ մենք ևս հաւատացած ենք, որ պ. Արասխանեանց Բագուն յաջող այցելող ուրիշ խմբագիրների չափ անազնիւ և ստոր չէ. անկասկած նա կը վերադարձնէ այդ գումարը, եթէ երբ և իցէ նա միջոց, փող ունենայ միայն, բայց... ինն տարեկան «Մուրճը»,—նրա բազմագոյն պատմութիւնը աչքի առաջ ունենալով,—արդեօք միթէ կարողանում է հաւատալ որ և է աջողութեան և հետևապէս նիւթական ապահով դրութեան:

Մի ամսագիր, որ ինն տարի առաջ իբրև կոչված էր տեսնում հայ ժողովրդի իսկական շահերին ծառայելու, «որ ուրիշ ամսագրերի, լրագիրների պէս չէր դալիս շահախնդրութեամբ ծանրանալու հասարակութեան շնչին», որ օրէնքի, պատմական ինչ տրամաբանութեան հիման վրա այսօր,—ինն տարի գոյութիւն ունենալուց յետոյ,—աններելի կերպով փաթաթվում է հասարակութեան շնչին: Ինչու «Մուրճը» 400 բաժանորդ միայն պիտի ունենայ. ինչու մեր միակ ամսագիրն իր գոյութիւնը չը պիտի կարողանայ պահպանել: Միթէ, հակառակ առաջադիմական օրէնքների, հայ ազգը տարէց տարի յետադիմում է, ընթերցանութեան պահանջը հայերի մէջ նուազում է...

Եւ ինչու հայ ընթերցողը, հայ ինտելիգենտը անհրաժեշտ պէտք պիտի զգայ օտար լեզուներով հրատարակվող ամսագրերի. ինչու պիտի մենք ստանանք «Русская Мысль», «Русское «Богатство», «Вѣстникъ Европы» և այլն, իսկ «Մուրճ» չը պիտի ստանանք, «Մուրճ» կարդալու կարիք չը պիտի զգանք... Պատճառը չատ պարզ է: Սակայն, տարաբաղդաբար, այդ պարզ պատճառը ըմբռնելուն խոչընդոտ է դառնում խմբագրական անընկճելի յամառութիւնը և «մեծ ասը»,—խմբագիր Արասխանեանց ինքն իր վրա սիրահարված է: Հաւատացած լինելով իր մտքի անհուն կարողութեան և հրապարակախօսական տաղանդի մէջ,—հաւատացած է, ըստ երևոյթին, նաև այդ անհուն մտքի արտադրութեան անսխալականութեան, ճշդութեան, կատարելութեան մէջ: Ինչ որ անցնում է նրա խմբագրական բովից, ինչ որ տպվում է «Մուրճում»—այդ նշանակում է «կատարելագոյնն է», դրանից դուրս «չիք փրկութիւն»... պէտք է կարդալ, պէտք է հետաքրքրվել «Մուրճով», և ով որ չէ կարդում, ով որ չէ հետաքրքրվում «Մուրճով»—Արասխանեանցի կարծիքով, նա ազէտ է, նա զարդացած չէ կարող լինել և այլն... Ահա խմբագրական այս սպախարակելի մեծամտութեան, կոյր յամառութեան շնորհիւ է, որ «Մուրճի» շնորհալի աշխատակիցները վշտացել, հեռացել են նրանից, խմբագիր Արասխանեանցի մոլեռանդ ինքնավստահութիւնն է, որ «Մուրճի» ընթերցողների, ամսագրի բաժանորդների թիւը մի քանի հարիւրից չէ անցնում, որի հաշվ կէսն էլ, եթէ ոչ աւելի, որքան ինձ յայտնի է «խաթեր իշուն»—լոկ նիւթական օգնութիւն հասցնելու համար են բաժանորդ գրված:

քան տարվայ աղամարդ եմ, բայց ոչ ոքից, նոյն իսկ իմ ծանօթներից օգնութիւն, ողորմութիւն չեմ խնդրել, այլ՝ միշտ օգնել, ձեռք եմ մեկնել կարօտեալներին... Հերիթը հիմա իմս է, ես պէտք է ձեռք պարզեմ...

—Ախար ցուրտ է, կը մրսես:

—Լսիր ինձ, վճռական կերպով պատասխանեց հայրս: Մայրս մօտեցաւ նրան և օգնեց հօրս հագնվելու: Հայրս ոտի կանգնելով՝ յենվեց գաւազանի վրա և դառնալով մօրս ասաց.

—Գնա հարևաններից մէկ կաթսայ խնդրիր. թերևս ես էլ կարողանամ եփելու մի բան բերել: Ապա ինձ դառնալով՝ ասաց.

—Ե՛կ, որդեակս, առաջնորդիր ինձ...

V.

Մենք դուրս եկանք փողոց: Ցիւնը դեռ մաղվում էր երկնքից: Քամին դադարել էր: Կառքերը արագութեամբ այս ու այն կողմ էին անցնում: Հայրս կորագլուխ կանգնած փողոցի մէջ՝ մտածում էր. ինչ էր նրա մտածողութեան պատճառը—ես չը գիտէի: Ես մրսում էի, այո, ամբողջ մարմնով դողդողում և ատամներս իրար էին զարկվում:

—Որդեակս, գնանք դէպի եկեղեցու կողմը, այնտեղ բարի մարդիկ չատ կը լինեն:

Մեր քայլերն ուղղեցինք դէպի հոյակապ եկեղեցու կողմը: Ժամասացութիւնը վերջացել էր: Ծխատէր քահանան երբ մեզ տեսաւ, մօտենալով՝ հարցրեց.

—Մեռել ունէք:

Հայրս փոխանակ պատասխանելու, մօտեցաւ և խոնարհութեամբ համբուրեց քահանայի աջը:

—Նորածնունդ ունէք, կրկին հարցրեց քահանան:

—Ո՛չ առաջինը, և ոչ երկրորդը, պատասխանեց հայրս:

—Աստուած տայ, որ լինի, պատասխանեց քահանան և հեռացաւ:

—Սրանք են Աւետարանի քարոզողները, անիծվեն այսպիսիները, ասաց հայրս քահանայի ետևից: Մենք ուզում էինք հեռանալ եկեղեցու բակից. այդ ժամանակ մէկ չաղ, կարճահասակ ծերունի մօտեցաւ մեզ.

—Դու ես, բարեպաշտ քրիստոնեայ, ինչու չես երևում, Պողոս, ասաց նա հօրս: Վերջինս պատասխանեց.

—Հիւանդ պառկած էի, պարոն երէցփոխ:

—Աստուած առողջութիւն տայ:

—Պարոն երէցփոխ, դուք գիտէք, որ ես էլ ժամանակին մի մարդ էի, առատաձեռն դէպի եկեղեցին...

—Ուղիղ է, ուղիղ է:

—Բայց այժմ, պարոն երէցփոխ, հանգամանքները փոխվել են և ինձ խիստ նեղ դրութեան մէջ դրել:

—«Աստուած եղածը» օրհնէ. տուր տեսնեմ, որքան ես տալիս:

Հօրս ճակատի վրա կնճիռներ կիտվեցին:

—Օգնեցէք, պարոն երէցփոխ, զաւակներս այս ցոն օրին՝ մերկ ու քաղցած են:

—Մենք ստանում ենք միայն...

—Դուք էլ չէք օգնում, հարստահարիչներ. միթէ այս տունը (հայրս ձեռքը մեկնեց դէպի եկեղեցու կողմը) նրա համար է կառուցվել, որ հարստահարիչներիդ ապաստարան լինի:

—Դուրս, դուրս անհաւատ, գոռաց մեզ վրա երէցփոխը:

—Ես հեռանում եմ, բայց անէծքս թողնում եմ ձեզպէսների վրա...

Մենք հեռացանք եկեղեցու բակից:

—Որդեակս, գնանք դէպի առաջնորդարանը. եպիսկոպոսը բարի և ողորմած է. թերևս նա մեզ օգնէ: Մենք մի քանի բօպէներից յետոյ հասանք առաջնորդարանը: Մեր քաղաքի առաջնորդը,—որ միջին հասակով, ալեզարդ միրուքով մի ծերունի էր,—այդ երեկոյ նստած առաջնորդարանի հիւրասենեակում՝ քաղաքի ամենահարուստ մէկ վաճառականի հետ զրոյց էր անում: Հայրս սկսեց ողորմութիւն խնդրել եպիսկոպոսից: Ո՛րքան դժուարութեամբ էին դուրս գալիս հօրս բերանից խօսքերը... Նա իր կեանքում առաջին անգամն էր, որ ողորմութիւն էր խնդրում:

—Ցօ, մարդ Աստուծոյ, ինչու քաղցած ես, չես ամաչում, միթէ բաղուկներ չունես, ինչու չես աշխատում.

—Սրբազան, ամաչում եմ, բայց ինչ անեմ. տանը երախաներս հաց են աղաղակում, հաց չը կայ... իսկ ինքս հիւանդ եմ, աշխատել չեմ կարողանում...

—Սուտ ես խօսում. բաղուկներդ քար կեփեն:

—Սուտ չեմ խօսում:

—«Քո երեսի քրտնքով հաց կեր»—այսպէս է պատուիրում մեր Տէր-Աստուածը:

—Այո, հաստատեց սրբազանի խօսքը հարուստ վաճառականը:

—Ապա ինչու չէք քրտնում, կամաց ասաց հայրս:

—Դասալար, վռնդիր սրանց. օրվայ այս պահուն աղքատներ չեն լինի,—հրամայեց եպիսկոպոսը իր ծառային: Մինչև վերջինի դալը՝ մենք հեռացանք առաջնորդարանից...

Եկեղեցու մօտով անցնելիս՝ հայրս տխուր հայեացքով վերջին անգամ նայեց դէպի այն խաչը, որ փառաւոր կերպով կանգնեցրել էին զանգակատան վրա... Խեղճ մարդ: Այդ տխուր հայեացքով արդեօք նա ազօթում, թէ բողոքում էր...

—Հայրիկ, միթէ այդ մարդիկը չեն խղճում մեզ, հարցրի ես անմեղութեամբ:

—Անիծվեն նրանք. ինձ աղքատացնողը իմ խիղճը եղաւ... Բայց յօժար եմ այսպէս աղքատ, արհամարհված լինել, քան՝ անխիղճ և հարուստ...

—Հայրիկ, մրսում եմ, գնանք:

—Գնանք, պատասխանեց նա, աչքերի արտասուքը սրբելով...

VI

—Մայրիկ, հայրիկը եկաւ. ասում էիր՝ սպասեցէք. դէհ վեր կաց, հաց տուր, այս խօսքերն ասացին քոյրերս, երբ մենք դատարկ ձեռքով ներս մտանք...

—Ջուր ես դրել կրակին, հարցրեց հայրս՝ մօրից:

—Դրել եմ, պատասխանեց մայրս և աւելացրեց. ինչ ես բերել, ինչ պէտք է եփեմ...

—Քար եփիր, սիրելի, մարդկային խիղճը քարացել է...

—Մայրիկ, դէհ վեր կաց, եփիր, երախայական անմեղութեամբ գոչեցին քոյրերս:

Մայրս արձան էր կտրել...

Հայրս կռացաւ, վառարանի կողքին ընկած քարի կտորն առաւ, նետեց եռող կաթսայի մէջ, իսկ ինքը պառկեց, գոչելով՝

—Աղքատներ, անօգնականներ, քար եփեցէք. այդպէս են պատիրում մեզ մեր հարուստները և հոգևոր հայրերը...

Այս եղան նրա վերջին խօսքերը...»

Պերճ—Սիւնի

Պէտք է «եղի պղերից բռնել», պէտք է աշխատել «Մուրճը» անհրաժեշտ դարձնել հասարակութեան համար, պէտք է կանոնաւորել խմբագրական գործը, հետաքրքիր դարձնել բովանդակութիւնը ու այդպէս բարւոքել, մշտապէս ապահովել ամսագրի գոյութիւնը, որիշ կերպ, «վիզ ծռելը», փոխատութիւն անելը ոչ մի նպատակայարմար հետևանքի չեն հասցնի:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Մայիսի 12-ին

Շնորհիւ օր. Ֆէլէկեանների, երէկ երեկոյեան, Ալէքսանդրօպոլի հասարակութիւնը մի մեծ գեղարուեստական զուարճութիւն վայելելու առիթն ունեցաւ: Լի թատրոնում, ընտիր հասարակութեան առջև, մեր տնորհալի հիւրերը, տեղական թատերասէրների մասնակցութեամբ խաղացին «Մայրական սէր» դրաման և «Միւս անդամ» մենախօսութիւնը: Օրիորդ Վարդիթերը, Մարիի դերում, իր չքնաղ խաղով մեծ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա: Նրա գեղեցիկ ձայնը, զգացմունքներով լի խօսքերը, նուրբ միմիկան և տնորհալի շարժումները երկար ժամանակ չեն մոռացվի մեր անչափ և աղքատ բեմի սիրահարների կողմից: Նկող կերակի, մայիսի 18-ին, կը տան երկրորդ ներկայացումը: Խաղալու են «Փարիզի շրջմոլիկը»: Մենք չենք կասկածում, որ մեր ինտելիգենցիան կը լցնէ ներկայացման դահլիճը, տեսնելու թէ օր. Մարի-Հրանոյշ ինչքան գեղեցիկ կերպով է պատկերացնում Փարիզի շարաճճի շրջմոլիկը: Նրանք կը տան և երրորդ ներկայացում, որի արդիւնքի կէսը, գաւառապետի պաշտօնակատար իշխան Անդրօնիկօվի առաջարկութեամբ, յատկացվում է այստեղի բանտարկեալներին: Ցարդելի իշխանի առաջարկութիւնը, ինչպէս գիտենք, օրիորդները սիրով են ընդունել, և չենք էլ կասկածում որ նոյն սիրով կը մասնակցեն նաև թատերասէրները, իսկ հասարակութիւնը կը շտապի ներկայ լինել այն ներկայացմանը, ուր գեղարուեստը միացրած կը լինի բարեգործութեան հետ:

Սրանից մի քանի շաբաթ առաջ մեր նախկին գաւառապետը թողեց Ալէքսանդրօպոլը և հեռացաւ իր նոր պաշտօնատեղին: Մեր գաւառը այժմ ժամանակաւորապէս կառավարում է, ինչպէս ասացինք վերևում, իշխան Անդրօնիկով, իսկ նրա օգնականի պաշտօնի համար ընտրված է պ. Գ. Զօզօբերիձէ: Խօսում են, որ իբր թէ այս երկու պարոններն էլ հաստատված են իրանց պաշտօնների մէջ: Մենք և մեզ հետ ամբողջ Ալէքսանդրօպոլը օր առաջ կը ցանկանայինք իրագործված տեսնել այս գեղեցիկ միտքը:

Մի շաբաթ սրանից առաջ մեզ այցելեց նաև զերասան Ստեփանեան իր կազմակերպած խմբով և ս. Փրկչի նախկին դպրոցի դահլիճում տուեց իր առաջին ներկայացումը, որից յետոյ ուղևորվեց Կարս, կամենալով վերադարձին էլի մի երկու ներկայացումն տալ մեզ մօտ: Խաղացին յայտնի «Ասլան-Բալասին», որի մէջ պ. Ստեփանեան Ասլան Բալասիի դերում իր գեղեցիկ խաղի համար մի քանի անգամ բեմ կանչվեց և վարձատրվեց բուռն ծափահարութիւններով: Հասարակութիւնը հաւանեց նաև օր. Ազնիւին, պ.պ. Ալիխանեանին և Անդրանիկին: Տարաբաղդաբար թատրոնը կիսով չափ էր լի, իսկ կարգապահութիւն ասած բանը բոլորովին բացակայ էր:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կաղզուան, ապրիլի 4-ին

Խնամարհաբար խնդրում ենք տեղ տալ «Մշակի» էջերում մեր այս քանի տող գրութեան:

Մենք ներքև ստորագրող՝ Կաղզուանի բնակիչներս՝ ոչ մի կերպ չը կարողանալով արժանավայել կերպով երախտահայտ լինել այստեղի սահմանապահ զօրքի բժիշկ Վ. Նասավինին մեզ ցոյց տուած անթիւ և անգնահատելի բը ժշկական բարիքների համար, սրբազան պարտաւորութիւն ենք համարում հրապարակով յայտնել նրան մեր խորին համակրութիւնն ու շնորհակալութիւնը: Դժուար է նրա անթիւ, բուն մարդասիրական գործերը մի առ մի թուել, այսքանը միայն կասենք ընթերցողներին, որ յարգելի բժիշկը, հիւանդին օգնութեան կանչող նոյն իսկ 8—10 տարեկան մանկան թոթովանքի նպատակը հասկանալուն պէս՝ վեր է առնում գլխարկը և շտապում հիւանդի մօտ առանց հարցնելու թէ ո՞վ է նա և ո՞ր տեղ: Եթէ այդ բժիշկը չը լինէր այստեղ, ինչ կը լինէր տեղական աղքատ դասակարգի դրութիւնը... որը ոչ թէ բժշկի այցելութեան, այլ նոյն իսկ 5—10 կոպէկ դեղերի գին չէ կարողանում վճարել: Նրա գործունէութիւնը արժանի է խորին շնորհակալութեան:

200 ստորագրութիւն

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Վաղը, մայիսի 18-ին, տեղի պէտք է ունենայ գերմանական աւետարանական-լիւտերական նորաշէն եկեղեցու օծումը: Գերմանական կօլոնիան որոշել է մեծ շքով կատարել այդ հանդէսը, որին մասնակցելու համար Մոսկվայից Թիֆլիս է եկել գեներալ-սուպերինտենդէնտ Ֆոն-Էվերս եպիսկոպոսը: Հանդէսը սկսվելու է առաւօտեան ժամը 10-ին:

Թիֆլիսի մէջ պոլիտեխնիկում քանալու խնդիրը սկսել է հետաքրքրել և մի քանի գաւառական քաղաքների ազգաբնակութեան: Աչքի առաջ ունենալով, որ մեծ ջանքեր են գործ դրվում պոլիտէխնիկումը հիմնել Վլադիկավկազում, մի քանի գաւառական քաղաքների ազգաբնակութեան մէջ միտք է յղացել դիմել կառավարութեան, խնդրելով որ պոլիտեխնիկումը հաստատվի Թիֆլիսում:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսին կից Կրծանիսի խաղողի այգիներում սաստիկ տարածված է անտրակնոզ հիւանդութիւնը: Կովկասեան ֆիլօքսերային կոմիտէը որոշել է իր մասնագէտներից մէկին յանձնել այնտեղի այգիները և ցոյց տալ այգեպէտերին խաղողը բժշկելու միջոցները:

Կարգադրութիւն է եղել, որ կանանց բժշկական ինստիտուտում ընդունվեն միայն քրիստոնեայ դաւանութեան ուսանողուհիներ: Մի քանի լրագիրներ, ինչպէս «Бирж. Вѣдомости» և «С.-Петербург. Вѣдомости» այդ կարգադրութիւնը վերին աստիճանի անպատակայարմար և անօգտակար են համարում և արդարացի կերպով նկատում են, թէ ժողովրդական առողջապահութիւնը պէտք է ամեն տեսակ նկատումներից բարձր համարել: Օրինակ, Ռուսաստանի մահմեդական ազգաբնակութիւնը, որի թիւը մի քանի միլիոն է հաշվում, կրօնական տեսակէտով անկարելի է համարում, որ մահմէդական կինը բժշկվի տղամարդի ձեռքով: Եթէ ինստիտուտի դռները բացվեն մահմէդական կանանց առաջ ևս, մահմէդականները կարող են ունենալ կին-բժիշկներ և մանկաբարձուհիներ, որոնց ազդեցութիւնը քաղաքակրթութեան տեսակէտից կարող է շատ բարերար լինել:

Ներկայ տարվայ աշնանը Թիֆլիսում պէտք է տեղի ունենայ մի ժողով, որը պէտք է քննութեան ենթարկի տաւարի ժանտախտի դէմ կռուելու միջոցները: Այդ ժողովին պէտք է մասնակցեն տաւարաբոյծներ, անասնաբոյժներ և տեղական վարչութեան ներկայացուցիչներ: Տաւարի ժանտախտի դէմ կռուելու օրէնքը մտցրված է ամբողջ Եւրոպայում և նոյն իսկ ամբողջ Եւրոպական Ռուսաստանում, և միայն Անդրկովկասն է բացառութիւն կազմում: Ժամանակ է, որ այդ օրէնքը գործադրվեր և մեզանում, յարմարեցրած տեղական պահանջներին:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ այս օրերս այնտեղ տեղի ունեցաւ տեղական և Կովկասից գնացած դրամատէրերի մի խորհրդակցութիւն «Պետերբուրգեան-Կովկասեան մի առևտրական բանկ» հիմնելու նպատակով: Ծրագրվող բանկի նպատակը բացառապէս պէտք է լինի ռուսաց արդիւնահանութեան զարգացումը Կովկասում, այն է ռուս նախաձեռնողներին դրամ փոխ տալ բնական հարստութիւնների մշակման համար: Բանկի դրամագլուխը պէտք է լինի 2,800,000 ռուբլի:

ԶԻԳԴԱՄԼՈՒԻՑ մեզ գրում են. «Երևանից դէպի Նախիջևան տանող խճուղու վրա գտնվում է Զիգդամլու գիւղը, որի միջով հոսում է Աղատ կամ Գեառնի գետը, որը սկիզբ է առնում Գեղարդայ լեռներից և թափվում է Արաքսի մէջ: Այս գետը ոռոգում է ամբողջ Գեառնի բաւարի, մօտ 50 գիւղի հողերը: Թէև այդքան օգտաւէտ, բայց գետը պատճառում է և վնասներ գարնան հեղեղների ժամանակ: Ինչպէս Արաքսը, այնպէս էլ նրա մէջ թափվող գետերը, ի միջի այլոց և Աղատը, վերջին մի քանի տարիները բաւական վնասներ հասցրին Արարատեան դաշտին, որի մակերևոյթը բաւական ցածր է, և որը հեղեղատների ժամանակ յաճախ փոխարկվում է լճի: Սակայն Աղատ գետի այս տարվայ հասցրած վնասը աւելի զգալի եղաւ. այսպէս, մայիսի 11-ին տեղացող անձրևների պատճառով Աղատ գետը այնքան բարձրացաւ, որ քանդեց Զիգդամլուի ամբոր քարաշէն երկաչքանի կամուրջը, և յարաբերութիւնը դադարեց երկու ափերի մէջ: Բացի կամուրջի քանդելը տուել է բաւականին վնասներ ցանքերին և նոյն իսկ գիւղի մի քանի տներ քշել ու տարել է: Իսկ գիւղի «ցած» կոչված մասի այգիները ամբողջապէս ջրի տակ են: Մարդկանց հետ դժբաղդութիւններ չեն պատահել: Ա՛ռ այժմ պօռտային երթևեկութիւնը դադարած է, նոյնպէս և ընդհատված է հեռագրական յարաբերութիւնը, որովհետև կամուրջը քանդվելու ժամանակ քշել տարել է հեռագրական սիւները:»

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Մայիսի 12-ին և 13-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժինը քննեց 1895 թ. Սղնախի գաւառի վերջին գիւղում սպանված վրացի քահանայ Աստատանիի գործը: Մեղադրվում էին չորս հոգի, որոնց թւում և եկեղեցու սպասաւորը: Մեղադրվածներին պաշտպանում էր երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Կանկ. կանչված էին հարիւրի չափ վկաներ: Դատարանը վկաներին հարցնելուց և պաշտպանողական ճառը լսելուց յետոյ, արդարացրեց չորսին էլ, իսկ Աստատանիի ժառանգների ներկայացրած քաղաքացիական պահանջը՝ յափշտակված փողերը վերադարձնելու մասին՝ մերժեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Daily News» լրագրի ներկայացուցիչը, օգտվելով նկարիչ Վերեշչագինի Լօնդոն այցելելուց, ունեցել է նրա հետ մի երկար խօսակցութիւն, ի միջի այլոց և հայոց հարցի մասին: Վերեշչագին յայտնել է, որ Պարսկաստանի և Թիւրքիայի հայերը ձգտում ունեն դէպի Ռուսաստան, որտեղ նրանց ազգակիցների վիճակը նախանձելի է. «Սակայն հայերը, նկարչի ասելով, համեստ պահանջներով բաւականացող տարրը չեն. նրանք մեծ յատակութիւններ ունեն իրանց ապագայի վերաբերութեամբ»: Ինչ վերաբերում է կ. Պոլսին՝ Ռուսաստանը ամենևին մտադրութիւն չունի նրան գրաւելու. բայց ցանկանում է, որ կ. Պոլիսը չընկնի և ուրիշի ձեռքը: Բացի դրանից Ռուսաստանը պէտք է ամեն կերպ ջանք գործ դնի, որ նրա նաւերը ազատ կերպով դուրս գան Սև ծովից դէպի Միջերկրական ծովը և ամենևին տրամադիր չէ, որ Անգլիան ազատ իրաւունք ունենայ մտնել Սև ծովը և կանգնել ռուսաց նաւահանգիստների դրանը: Սև ծովը Ռուսաստանի համար ներքին լճի նշանակութիւն ունի:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

Գերմանիան հնձում է. Իտալական «Messaggero» լրագրի թղթակիցը Սալոնիկից նախանձով հաստատում է, որ Գերմանիայի «նըպատակայարմար արևելեան քաղաքականութիւնը» խլեց ամբողջ Թիւրքաց շուկան: Գերմանական ազդեցութիւնը աճում է ամեն տեղ: Թիւրքերը բացարձակ յայտնում են իրանց համակրանքը գերմանացիներին և ուզղակի ասում են, որ եթէ նոր ֆրանս-գերմանական պատերազմ ծագի, իրանք կամաւոր պիտի զրվեն և կուեն իրանց եղբայրակից գերմանացիների հետ միասին: «Times» լրագիրը մի խիստ յօդուած է տպել Գերմանիայի դէմ յոյն-թիւրքական ընդհարման առիթով: Լօնդոնից հեռագրում են «Indépendance Belge» լրագրին. «Սուլթանի դիտաւորութիւնների մասին ոչինչ յայտնի չէ, բայց առանձին ուշադրութիւն հրաւիրում է այն հանգամանքը, որ կ. Պոլսի և Բերլինի մէջ տեղի ունի հեռագիրների չափազանց սաստիկ փոխանակութիւն: Ասում են, որ գերմանական դեսպան չտաքը դէմ է եղել դինադադարին, քանի գրաւված չէր Դոմոկոսը»:

Թիւրք-հայրենասէրներ. Թիւրքիայում կան բազմաթիւ հայրենասէրներ, որոնք ասում են, թէ չը պէտք է Թեսալիան վերադարձնել Յունաստանին, որպէս զի այդ վերջինը սրանից յետոյ զգոյշ լինի իր գործունէութեան մէջ: Դրանք յոյս են դնում Գերմանիայի վրա, որովհետև նրա ձայնը սկսում է աւելի և աւելի մեծ ազդեցութիւն ձեռք բերել սուլթանի վրա: Եւ իրաւի, գերմանացիները գիտեն օգուտ քաղել գործերի դրութիւնից: Բերլինի լրագիրները պատմում են, որ առևտրական շրջանում գերմանացիները կը բռնեն յոյն վաճառականների տեղը Թիւրքիայում:

Եգիպտոսի խեդիվի վարմունքը. «Memorial Diplomatique» լրագրի խօսքով, յոյն-թիւրքական պատերազմի պատճառով, սաստիկ լարված յարաբերութիւններ սկսվեցին եգիպտական խեդիվի և լօրդ Կրոմէրի մէջ: Ա՛ռաջ-փաչան, որպէս թիւրքաց վասալ, կամենում էր օգնել Թիւրքիային, բայց լօրդ Կրոմէր յայտնեց խեդիվին, որ Եգիպտոսը, գտնվելով Մեծ-Բրիտանիայի հովանաւորութեան տակ, առանց Լօնդոնի կաբինէտի համաձայնութեան ոչինչ չէ կարող ձեռնարկել: Խեդիվը սաստիկ բարկացած՝ հեռացաւ լօրդ Կրոմէրից: Յետոյ Կրոմէր առաջարկեց խեդիվին 15000 զօրք ուղարկել Թիւրքիա, ուրախանալով, որ Անգլիան դրա փոխարէն նոյն քանակութեամբ զօրք կուղարկի Եգիպտոս՝ այնտեղ կարգը պահպանելու:

Գարիբալդիականներ. Լրագիրներին հեռագրում են, որ Դոմոկոսի մօտ տեղի ունեցած կռուի ժամանակ վիրաւորվեցին 50 գարիբալդիականներ և սպանվեց իտալական պատգամաւոր Ֆրասսի: Ասում են, որ Զիգրիանի ևս սպանված է:

Սուլթանի պատասխան-հեռագիրը. Մայրաքաղաքի լրագիրներում տպված է հետևեալ հեռագիրը, որ Թիւրքաց սուլթանը, իբրև պատասխան, ուղարկել է Թագաւոր Կայսրին: «Խնդրում եմ Ձեր Մեծութիւնից ընդունել իմ եռանդուն և անկեղծ շնորհակալութիւնը այն բարեկամական հաստատքների և շնորհաւորութիւնների համար, որ Դուք արտայայտել էք իմ վերաբերմամբ և իմ զինուորների աջողութեան առիթով այն հեռագրով, որը բարեհաճել էք ուղղել ինձ հանդերձ նոր հաստատքներով Ձեր դէպի ինձ ունեցած խաղաղասիրական զգացումների մասին: Այդ զգացումները հիմնված են մեր մէջ գոյութիւն ունեցող հաստատ բարեկամութեան և դրացիական յարաբերութիւնների վրա: Ես կատարելապէս գնահատում եմ Ձեր Մեծութեան խաղաղասիրական դիտաւորութիւնները և մասնակից եմ նրանց, և իբրև ապացոյց իմ ցանկութեան՝ համակերպելու Ձեր Մեծութեան արտայայտած ցանկութիւններին պատերազմական գործողութիւնները և արիւնհեղութիւնը դադարեցնելու վերաբերմամբ, ես հրամաններ տուի երկու բանակների պետերին դադարեցնել պատերազմական գործողութիւնները: Խնդրում եմ նոյնպէս Ձեր Կայսերական Մեծութիւնից բարեհաճել ուշադրութեան առնել, որ ես կը ցանկայի, որ մեծ պետութիւնների բարեկամական միջնորդութիւնը խաղաղացման դիտումներով՝ առաջ բերի իմ պետութեան արժանապատուութեան և իրաւունքների ապահովութիւնը և հաստատէ ընդհանուր խաղաղութիւնը նրա սահմանների ապահովութեան հատատ պաշտպանութեամբ»:

Հաշտութեան սկիզբը. «Русск. Вѣдомости» Ախէնքի թղթակիցը գրում է. Պատերազմական գործողութիւնները դադարեցին: Ապրիլի 29-ին թէսալիական պատերազմական բեմի վրա մի քանի ընդհարումներ տեղի ունեցան Դոմոկոսի և Ալմիրայի շրջականներում: Լպիրոսում օրից օր սպասում էին Պրևեզայի անձնատուր լինելուն... Բայց երէկ յունաց կառավարութիւնը հրաման արձակեց դադարեցնել պատե-

…ղմական գործողութիւնները յունական զօրքերի ամբողջ գծի վրա։ Այդպիսով յոյն-թիւրքական պատերազմը մտել է իր վերջին չրջանի էջ։ Ինչպէս սովորութիւն է դարձել վերջերս, գնամի զօրքերը կը կանգնեն միմեանց հանդէպ կը սպասեն պատերազմի վերջնական վախճանին։

Յունաց զօրքը. Պատերազմական գլխաւորեմի վրա, Թեսալիայում, ներկայումս գտնվում մօտ 30 հազար յունաց կանոնաւոր զօրք, չը …ալով կամաւորներին, որոնք պատերազական ոչինչ նշանակութիւն չունեն։ Զօրքը …ատիկ անկարգ դրութեան մէջ է գտնվում։ Թէ …ուտեսի և թէ ռազմամթերքների պակասութիւն է զգացվում։ Զինուորների վախուստը …ովորական երեոյթ է կազմում։ Կարգապահութիւնը խախտված է, և զինուորները այլ ևս չեն …աւատում ոչ իրանց օֆիցէրներին, ոչ էլ գեկարներին։ Պատմում են, որ գեներալներից …բարձր պաշտօնեաներից մի քանիսը պատասխա…տու պաշտօններ ստացան միայն նրա համար, …որ պարլամէնտի անդամներ էին և զօրքի հետ …չինչ առնչութիւն չունէին։ Ի հարկէ, կռուի մէջ …այդպիսի հրամանատարները չէին կարող զինուորների վստահութիւնը գրաւել։ Ամէնքի նոր մինիստրութիւնը. կառավարութեան գլուխ ձեռք …սնելուն պէս, մեծ փոփոխութիւններ կատա…սնելուն պէս, մեծ փոփոխութիւններ կատա…ռեց զօրքի մէջ, նշանակելով նոր հրամանատարներ, և յետ կանչելով հներին։ Այդ բոլորը …ապացուցանում է, որ յունական զօրքը չատ …մնարգ դրութեան մէջ է գտնվում և որ Բալի …ի մինիստրութիւնը՝ ծանօթանալով գործերի …նկական դրութեան հետ, վճռեցին վերջ դնել …այդ թշուառ տրագիկոմիքական պատերազմին։

Յունական զիրքերը. Ներկայումս յունաց զօրքի գրաւած զիրքը պատերազմական բեմի …վրա հետևեալն է. 1. Նաւատորմը։ Հաւանաբար միջազգային համաձայնութեան, որով թիւրքերը դրաւեցին Վոլո քաղաքը, նաւատորմը պատում է այդ քաղաքի և Ալմիրայի չրջականերում, հրաման ունենալով մօտենալ Վոլոին միայն թնդանօթի հարուածի հեռաւորութեամբ։ Յունաց նաւատորմի ամբողջ գործունէութիւնը արտայայտվեց նրանով, որ ռմբակոծեց մի քանի նաւահանգիստներ և մի քանի նաւեր բռնեց։ Աւելի չատ բան կարելի էր սպասել այդ նաւատորմից, մանաւանդ որ թիւրքաց նաւատորմը չերեսաց անգամ պատերազմական բեմի վրա։ II Էպիրոսում Մօնոսի դիվիզիան ամբողջ ժամանակը անգործութեան էր մատնված և յայտնի չէ թէ պատճառն ինչ էր, որ նա յետ քաշվեց Պենտեպիգադիից դէպի Արտա, թէպէտ ոչ մի տեղ զօրեղ թշնամուն չը հանդիպեց, հեռացաւ Իմարէտ և Սիլնարու երկու կէտերից, որ նա գրաւած ունէր թիւրքաց սահմանի վրա։ Թէ ինչ է կատարվում Պրեվեզէում, հասկանալ դժուար է. արդէն մի քանի անգամ հաղորդեցին, որ Պրեվեզէն անձնատուր եղաւ և այժմ կրկին խօսում են, որ եթէ պատերազմական գործողութիւնները չը դադարէին, այդ ամրութիւնը անպատճառ կը գրաւէին յոյները։ III. Թէսալիայում յունական զօրքը գրաւած ունի երկու կէտ,—Դոմոկոս և Սուրին։ Դոմոկոսի մօտ գտնված դիրքի վրա է կանգնած Դիոդոխի զօրքը։ Չը նայելով զօրքի ծանր գրութեանը, մշտական անձրևներին և պաչարների պակասութեանը, այդ դիրքերը եռանդով ամրացնում են յոյները։

ՊԱՐԻԶԻ ԱՂԷՏԻ ԱՌԻԹՈՎ

Հեռագիրները հաղորդում են, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆոր վիրաւորվել է այն ճառից, որ հայր Օլիվիէ արտասանեց զոհերի համար կատարված հոգեհանգստի ժամանակ։ Առաջ ենք բերում այդ ճառից մի քանի քաղուածներ։

«Ինչի համար պատահեց այս սարսափելի աղէտը։ Միթէ մենք գտնվում ենք կոյր զօրութեան ձեռքում, որ հարուածում է, չը հասկանալով այդ հարուածների հետևանքը, և որին անօգուտ կը լինէր ուղղել թէ հարցեր և թէ անէծք, որովհետև նա չէ կարող լսել և պատասխան տալ։ Ի հարկէ ոչ։ Աստուած կամեցաւ մի սարսափելի ցաւ տալ ներկայ դարի գոռոզութեան և պատժել Ֆրանսիային։ Այո, ժամանակակից Ֆրանսիան արժանի է այդ պատժին՝ իր աւանդութիւններից հրաժարվելու պատճառով։ Փոխանակ քրիստոնէական քաղաքակրթութեան գլուխ կանգնելու, նա վարակվեց այնպիսի բարքերով, որոնց մէջ ամենեին նկատելի չէ նրա հպարտ և վեհանձն ընութիւնը, և նրա անունը դարձել է համանիշ խելագարութեան և ապերախտութեան դէպի Աստուած»։

Հայր Օլիվիէի ճառի այդ մասը ծանր տպաւորութիւն գործեց ունկնդիրների վրա։ Նրանց կարծիքով, այդ քաղաքական ակնարկները բոլորովին անտեղի են մի հոգեհանգստի ժամանակ։

ԹԻԻՐՔԻԱ ԵՒ ԹԻԻՐՔԱՑ ԶՕՐՔԸ

Գերմանական «Militär Wochenblatt» ամսագրում տպված է բարոն ֆօն դեր-Հոլցի մի հետաքրքիր յօդուած Թիւրքիայի և առհասարակ Թիւրքաց զօրքի մասին։ Հեղինակը հաւատացնում է, որ Թիւրք հասարակ ժողովուրդը ամենեին ֆանատիկոս չէ և մեծ համբերատարութեամբ է վերաբերվում ոչ-մահմեդականների կրօնական հաւատալիքներին։ Իսկ հայերի կոտորածը Փոքր-Ասիայում և Կ. Պոլսում, Հոլցի ասելով, ոչ թէ Թիւրքերի ֆանատիկոսութեան գործ էր, այլ նախամտածած քաղաքական դաւադրութեան հետևանք էր, այնպէս որ այդ գազանութիւնների համար պէտք է մեղադրել մի քանի անձանց, և ոչ թէ ժողովրդական մասսաները։

Սակայն, մահմեդական կրօնը առաջին դեր է խաղում Թիւրքաց զօրքի մէջ։ Զինուորները օրական հինգ անգամ հաւաքվում են մզկիթում. աղօթքին չեկողը աւելի խիստ պատժի է ենթարկվում, քան ուրիշ յանցանքների համար։ Առհասարակ, կրօնական պահանջները նպաստում են ամենախիստ դիսցիպլինայի պահպանմանը Թիւրքիայում։

Թիւրքերը, մինչև անգամ ամենավերջինները, իրանց տիրապետող ցեղ են համարում։ Դպրոցի և կրօնի ազդեցութիւնը այնքան մեծ է Թիւրքերի վրա, որ նրանք անկարող են լինում ապրել օտար երկիրներում օտար տիրապետութեան տակ։ Այսպէս, օրինակ, նրանք փախչում են Բ. Դունից խլված նահանգներից, թէպէտ նիւթապէս նրանք այդ տեղերում աւելի լաւ դրութեան մէջ են գտնվում, քան Թիւրքիայում։ Կայ միայն մի բացառութիւն. Թիւրքերը հաշտվում են ռուսաց վարչութեան հետ, բայց չեն կարողանում դիմանալ աւստրիական Բոսնիայում և Հերցեգովինայում։ Սուլթանի հեղինակութիւնը (մի և նոյն է, սիրված է թէ չէ) չափազանց մեծ է։ Նրա հրամանները ուղղափառների համար—օրէնք են, որոնց դէմ գնալ անկարելի է։

Մի և նոյն ժամանակ Թիւրք զինուորը չափազանց խնայող է։ Արբեցողութիւնը ջանիլ զինուորների (և առհասարակ գիւղացիների) մէջ անյայտ է։ Թիւրքերը առողջ և զօրեղ մարդիկ են։ Նրանք մինչև ծերութեան հասակը պիտանի են լինում զինուորական ծառայութեան համար։ Զինուորական զորձը նրանք չատ չուտ են սովորում իրանց մեծ ընկերներից։ Զինուորական վարժութիւնները զօրքի մէջ կատարվում են երկու անգամ—առաւօտեան և արևի մայր մտնելուց առաջ, մեծ կարգապահութեամբ։

Հակառակ տարածված կարծիքի, Հոլց կարծում է, որ Թիւրքաց զօրքերը կատարելապէս ընդունակ են յարձակողական կռիւ մղել որպիսի թշնամու դէմ կուզէք։ Առհասարակ, գերմանական զինուորական գրողը հիացած է Թիւրքաց զօրքից։ Այդպիսի զօրքով, ասում է նա, հրաշքներ կարելի է գործել (??), եթէ նա ունենայ լաւ զեկավարներ։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԲԻԱՅԻՑ

Էրզրում, ապրիլի 26-ին

Յոյն-Թիւրքական պատերազմի պատճառով, մինչև այժմ արտասովոր ուրախութիւն մ'էր, որ կը տիրէր տեղւոյս Թիւրքերի մէջ. մէկը միւսին յաջորդող հեռագրալուրերը Յունաստանի մէջ Թիւրք զօրքերու մեծամեծ յաղթութիւնները կը նկարագրէին։ Սակայն յանկարծ հրաման ստացվեց, որ Բասէնի, Աշչկերտի և Այնթապի տան և երկու համիդիէ զօրագնդերն պատրաստ լինեն և 15 օրէն յետ Կ. Պոլիս մեկնեն։ Այդ հեռագիրը մահմէտականների ծիծաղն ու խնդումը աբխուր մատնոդութեան փոխեց։ Ոչ ոք չը գիտէ, թէ ինչ կերպ մեկնէ այդ յանկարծական երևոյթը։ Ոմանք կը հետևցնեն, թէ թերևս խաբուսիկ էր եւրոպական պետութեանց տաճկաց դէմ բռնած անտարբեր դիրքը, թէ յունական պատերազմը մի դաւադրութիւն էր Թիւրք կառավարութիւնը ապարէզ քաշելու համար, թէ այժմ միանամուռ սկսել են հարուածել դայն ամեն կողմէ և այլն և այլն...

Իսկ աւելի խորագէտ քիւրդեր կարծում են, որ Ռուսաստանը պիտի գայ Թիւրքիան բարեկարգելու համար, ուստի Կ. Պոլսէն եկած հրամանը զիրենք զինաթափ անելու պատրուակ է։ Այդ իսկ պատճառով դժկամակութիւններ ցոյց կը տան և չեն ուզեր տեղներից մեկնիլ։ Համիդէյի գլխաւորներ հեռագրեցին, որ ձիեր կը պակսին ճամբայ ելնելու համար։ Սակայն անօգուտ. հրամանը կրկնվեց աւելի խստիւ։ Այնթապի սիպկերներու աչիրի պարագլուխ Հիւսէյն-բէկը ուրախ է երթալ և պատրաստութիւններ կը տեսնի։ Միւսներ չեն ուզեր երթալ և ուզիթ կորոնեն հայերու հետ կռիւ բռնվելու համար, որպէս զի դրանով արգելվեն։

***

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 15 մայիսի։ Վոլոի հիւսպատոսների ծանուցման պատճառով, թէ երիտասարդ կայ, որ Թիւրքերը յարքունիս կը գրաւեն մաքսատան մէջ գտնվող ապրանքները, դեսպանները դիմեցին Բ. Դրան՝ առաջարկելով յետ կենալ ապրանքները գրաւելուց։

ՊԱՐԻԶ, 15 մայիսի։ Պետութիւնների յիշատակագրի մէջ, որ յանձնվեց Բ. Դրան, թոյլ կ տրվում թեսալիական սահմանի նոր որոշումն. սկզբունքով համաձայնութիւն է տրվում պատերազմական տուգանք առնելուն, չորոշելով նրա թանչանը, և մերժվում է կատարելապէս դաշինքները վերացնելու պահանջը, բայց կարելի է քննութեան ենթարկել մի քանի մասնաւոր որոշումներ, որոնք զեղծումների առիթ տուին։

ԼՕՆԴՕՆ, 15 մայիսի։ «Daily «Telegraph» լրագրին Ամէնքից հեռագրում են Կրետէ կղզու վրա եղած մի նոր դէպքի մասին. ծովագետները չէին թոյլ տալիս, որ Սանկիոս յունական զօրքերի հետ միասին հեռանայ կղզուց և յայտնեցին, որ նրան թոյլ կը տան գնալ միայն այն ժամանակ, երբ կը վերադարձվեն Ակրոտիրիի ապատամբների ձեռքում գտնված թնդանօթները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին Մեծ պալատի եկեղեցում, Ցարսկոյե-Սելօում, մաղթանք կատարվեց։ Ներկայ էին՝ Թագաւոր կայսրը, Մարիա Ֆեօդորովնա և Ալէքսանդրա Ֆեօդորովնա Կայսրուհիները, Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանները։

ՄՕՍԿՎԱ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին Մոսկվան ծանեց Նոցա Մեծութիւնների թագադրութեան առաջին տարեդարձը։ Մայրաքաղաքի բոլոր տաճարներում մաղթանքներ կատարվեցին։

ԼՕՆԴՕՆ, 16 մայիսի։ «Times» լրագրին հեռագրում են Ամէնքից, որ Ակրոտիրիի ապատամբները, գնդապետ Սայակոսի խորհրդով, յանձնեցին երեք թնդանօթ. մնացած երկուսը մնացին ապատամբների ձեռքում՝ կղզու ներսը։

ՊԱՐԻԶ, 16 մայիսի։ «Figaro», «Matin» և ուրիշ լրագիրներ, հաղորդելով որ Գերմանիան միացել է՝ դեսպանների կողմից Բ Դրան տուած յայտարարին, յայտնում է, որ այդ միացումը տեղի ունեցաւ չնորհիւ այն դիմումին, որ արաւ ռուսաց կառավարութիւնը Գերմանիային։ Պաշտօնական չրջաններում հաւատացնում են որ այժմ, ինչպէս և պատերազմից առաջ, ռուսաց կառավարութիւնը գործ է դնում ամենամեծ ջանքեր՝ համերաչխութիւն պահպանելու պետութիւնների մէջ և թեթևացնելու Յունաստանի դրութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վլաստոյի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և ներքին հիւանդութիւնների։
Դ. Դ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց հ. չորեքչաբթի, ուրբաթ և չաբաթ, իսկ 1½—2 ժ. երկուչաբթի, երեքչաբթի և հինգչաբթի։
Ի. Ֆ ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կորդի քթի և կրծքի հ. երկուչաբթի, չորեքչաբթի և ուրբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքչաբթի, հինգչաբթի և չաբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքչ. հինգչ. և չաբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուչաբթի չորեքչաբթի և ուրբաթ։
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ ժ.

Հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հեռադիտութիւններ են անում մէզի, խխլարեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՑԱՆՁՆ ԵՄ ԱՌՆՈՒՄ ՀԱՄԵՄԱՏԱԲԱՐ ԷԺԱՆ ԳՆՈՎ՝ ուղղել Ֆասագի շտուկատուրկան առանց սիներ դնելու, կապել երկաթի կապերով երկրաշարժից գոյացած ճեղքեր, ոսկեջրել տաճարների խաչեր, գործել զրմբէթների վրա, բարձր և երկիւղալի տեղերում։ Ընդունում եմ ներկելու ամենատեսակ պատուէրներ. ունեմ յանձնարարականներ։ Հասցէն՝ ռուսաց սեմինարիայի տուն, պոլսեցի Բելիքչեան։ (№ 57) 1—5

Կենարօնական դրավաճառանոցում Ծախվում են
Գէորգ քահանայ Մկրտումեանցի հրատարակութիւնները

ՂԱՅԹՄԱՋԱՆՑ ՄԻԲԵԼԸ	8 կ.
ԴՐՕՇԱԿ (Լիֆօրի)	8 կ.
ՄԻՍԻՕՆԱՐ ՎԷՑՕՏՏԵՐԻ ԿԵԱՆՔԸ	10 կ.

(№ 56) 2—5

ԴԱՍԵՐ

Հայերէնից, ռուսերէնից և առարկաներից՝ միջի նակարգ դպրոց մտնել ցանկացող երեխաների համար։ Հասցէ՝ Головинскій проспектъ, табачный магазинъ К. Теръ-Хачатурянца.
(№ 50) 3—3



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՁԷԹ, սմբակները սղոցելու, կակղացնելու և սեացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։ ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.։

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չոքելիների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։ ԳԻՆԸ՝ 75 կոպ.։

ԹԱՄԲԱՑԻՆ ՍԱՊՈՆ (յատկապէս ստիպակ կաշուց չինած թամբերի համար)։ Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ ստիպակ և գանազան գոյների կաշի մաքրելու։ ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.։

Ծախվում է դեղաբարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։
(№ 22) 30—50

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՅԾԱԿ»։ Մի քանի բոպէում նորոգում է հին, անչնորհ, խաղխղած կահկարասիքը, պիանինո, բոյալներ, հայելիի և ուրիշ չրջանակներ, արկղիկներ, տիրիկներ և այլ յկած փայտեայ առարկաներ—չը դիմելով աստղաձագործի կամ ողորկողի օգնութեանը։ ԳԻՆԸ՝ 1 ր.։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոչտերից մօզոլներ), եղունգներից և կաշուէ այլ ուռոյցներից։ «Ցօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոչտերը, եղունգները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում։ ԳԻՆԸ՝ 60 կ.։

Ծախվում է դեղաբարական խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղաբարական ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բագու։
28—50 (22 №)

…ղմական գործողութիւնները յունական զօրքերի ամբողջ գծի վրա։ Այդպիսով յոյն-թիւրքական պատերազմը մտել է իր վերջին չրջանի էջ։ Ինչպէս սովորութիւն է դարձել վերջերս, գնամի զօրքերը կը կանգնեն միմեանց հանդէպ կը սպասեն պատերազմի վերջնական վախճանին։

Յունաց զօրքը. Պատերազմական գլխաւորեմի վրա, Թեսալիայում, ներկայումս գտնվում մօտ 30 հազար յունաց կանոնաւոր զօրք, չը …ալով կամաւորներին, որոնք պատերազական ոչինչ նշանակութիւն չունեն։ Զօրքը …ատիկ անկարգ դրութեան մէջ է գտնվում։ Թէ …ուտեսի և թէ ռազմամթերքների պակասութիւն է զգացվում։ Զինուորների վախուստը …ովորական երեոյթ է կազմում։ Կարգապահութիւնը խախտված է, և զինուորները այլ ևս չեն …աւատում ոչ իրանց օֆիցէրներին, ոչ էլ գեկարներին։ Պատմում են, որ գեներալներից …բարձր պաշտօնեաներից մի քանիսը պատասխա…տու պաշտօններ ստացան միայն նրա համար, …որ պարլամէնտի անդամներ էին և զօրքի հետ …չինչ առնչութիւն չունէին։ Ի հարկէ, կռուի մէջ …այդպիսի հրամանատարները չէին կարող զինուորների վստահութիւնը գրաւել։ Ամէնքի նոր մինիստրութիւնը. կառավարութեան գլուխ ձեռք …սնելուն պէս, մեծ փոփոխութիւններ կատա…ռեց զօրքի մէջ, նշանակելով նոր հրամանատարներ, և յետ կանչելով հներին։ Այդ բոլորը …ապացուցանում է, որ յունական զօրքը չատ …մնարգ դրութեան մէջ է գտնվում և որ Բալի …ի մինիստրութիւնը՝ ծանօթանալով գործերի …նկական դրութեան հետ, վճռեցին վերջ դնել …այդ թշուառ տրագիկոմիքական պատերազմին։

Յունական զիրքերը. Ներկայումս յունաց զօրքի գրաւած զիրքը պատերազմական բեմի …վրա հետևեալն է. 1. Նաւատորմը։ Հաւանաբար միջազգային համաձայնութեան, որով թիւրքերը դրաւեցին Վոլո քաղաքը, նաւատորմը պատում է այդ քաղաքի և Ալմիրայի չրջականերում, հրաման ունենալով մօտենալ Վոլոին միայն թնդանօթի հարուածի հեռաւորութեամբ։ Յունաց նաւատորմի ամբողջ գործունէութիւնը արտայայտվեց նրանով, որ ռմբակոծեց մի քանի նաւահանգիստներ և մի քանի նաւեր բռնեց։ Աւելի չատ բան կարելի էր սպասել այդ նաւատորմից, մանաւանդ որ թիւրքաց նաւատորմը չերեսաց անգամ պատերազմական բեմի վրա։ II Էպիրոսում Մօնոսի դիվիզիան ամբողջ ժամանակը անգործութեան էր մատնված և յայտնի չէ թէ պատճառն ինչ էր, որ նա յետ քաշվեց Պենտեպիգադիից դէպի Արտա, թէպէտ ոչ մի տեղ զօրեղ թշնամուն չը հանդիպեց, հեռացաւ Իմարէտ և Սիլնարու երկու կէտերից, որ նա գրաւած ունէր թիւրքաց սահմանի վրա։ Թէ ինչ է կատարվում Պրեվեզէում, հասկանալ դժուար է. արդէն մի քանի անգամ հաղորդեցին, որ Պրեվեզէն անձնատուր եղաւ և այժմ կրկին խօսում են, որ եթէ պատերազմական գործողութիւնները չը դադարէին, այդ ամրութիւնը անպատճառ կը գրաւէին յոյները։ III. Թէսալիայում յունական զօրքը գրաւած ունի երկու կէտ,—Դոմոկոս և Սուրին։ Դոմոկոսի մօտ գտնված դիրքի վրա է կանգնած Դիոդոխի զօրքը։ Չը նայելով զօրքի ծանր գրութեանը, մշտական անձրևներին և պաչարների պակասութեանը, այդ դիրքերը եռանդով ամրացնում են յոյները։

ՊԱՐԻԶԻ ԱՂԷՏԻ ԱՌԻԹՈՎ

Հեռագիրները հաղորդում են, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆոր վիրաւորվել է այն ճառից, որ հայր Օլիվիէ արտասանեց զոհերի համար կատարված հոգեհանգստի ժամանակ։ Առաջ ենք բերում այդ ճառից մի քանի քաղուածներ։

«Ինչի համար պատահեց այս սարսափելի աղէտը։ Միթէ մենք գտնվում ենք կոյր զօրութեան ձեռքում, որ հարուածում է, չը հասկանալով այդ հարուածների հետևանքը, և որին անօգուտ կը լինէր ուղղել թէ հարցեր և թէ անէծք, որովհետև նա չէ կարող լսել և պատասխան տալ։ Ի հարկէ ոչ։ Աստուած կամեցաւ մի սարսափելի ցաւ տալ ներկայ դարի գոռոզութեան և պատժել Ֆրանսիային։ Այո, ժամանակակից Ֆրանսիան արժանի է այդ պատժին՝ իր աւանդութիւններից հրաժարվելու պատճառով։ Փոխանակ քրիստոնէական քաղաքակրթութեան գլուխ կանգնելու, նա վարակվեց այնպիսի բարքերով, որոնց մէջ ամենեին նկատելի չէ նրա հպարտ և վեհանձն ընութիւնը, և նրա անունը դարձել է համանիշ խելագարութեան և ապերախտութեան դէպի Աստուած»։

Հայր Օլիվիէի ճառի այդ մասը ծանր տպաւորութիւն գործեց ունկնդիրների վրա։ Նրանց կարծիքով, այդ քաղաքական ակնարկները բոլորովին անտեղի են մի հոգեհանգստի ժամանակ։

ԹԻԻՐՔԻԱ ԵՒ ԹԻԻՐՔԱՑ ԶՕՐՔԸ

Գերմանական «Militär Wochenblatt» ամսագրում տպված է բարոն ֆօն դեր-Հոլցի մի հետաքրքիր յօդուած Թիւրքիայի և առհասարակ Թիւրքաց զօրքի մասին։ Հեղինակը հաւատացնում է, որ Թիւրք հասարակ ժողովուրդը ամենեին ֆանատիկոս չէ և մեծ համբերատարութեամբ է վերաբերվում ոչ-մահմեդականների կրօնական հաւատալիքներին։ Իսկ հայերի կոտորածը Փոքր-Ասիայում և Կ. Պոլսում, Հոլցի ասելով, ոչ թէ Թիւրքերի ֆանատիկոսութեան գործ էր, այլ նախամտածած քաղաքական դաւադրութեան հետևանք էր, այնպէս որ այդ գազանութիւնների համար պէտք է մեղադրել մի քանի անձանց, և ոչ թէ ժողովրդական մասսաները։

Սակայն, մահմեդական կրօնը առաջին դեր է խաղում Թիւրքաց զօրքի մէջ։ Զինուորները օրական հինգ անգամ հաւաքվում են մզկիթում. աղօթքին չեկողը աւելի խիստ պատժի է ենթարկվում, քան ուրիշ յանցանքների համար։ Առհասարակ, կրօնական պահանջները նպաստում են ամենախիստ դիսցիպլինայի պահպանմանը Թիւրքիայում։

Թիւրքերը, մինչև անգամ ամենավերջինները, իրանց տիրապետող ցեղ են համարում։ Դպրոցի և կրօնի ազդեցութիւնը այնքան մեծ է Թիւրքերի վրա, որ նրանք անկարող են լինում ապրել օտար երկիրներում օտար տիրապետութեան տակ։ Այսպէս, օրինակ, նրանք փախչում են Բ. Դունից խլված նահանգներից, թէպէտ նիւթապէս նրանք այդ տեղերում աւելի լաւ դրութեան մէջ են գտնվում, քան Թիւրքիայում։ Կայ միայն մի բացառութիւն. Թիւրքերը հաշտվում են ռուսաց վարչութեան հետ, բայց չեն կարողանում դիմանալ աւստրիական Բոսնիայում և Հերցեգովինայում։ Սուլթանի հեղինակութիւնը (մի և նոյն է, սիրված է թէ չէ) չափազանց մեծ է։ Նրա հրամանները ուղղափառների համար—օրէնք են, որոնց դէմ գնալ անկարելի է։

Մի և նոյն ժամանակ Թիւրք զինուորը չափազանց խնայող է։ Արբեցողութիւնը ջանիլ զինուորների (և առհասարակ գիւղացիների) մէջ անյայտ է։ Թիւրքերը առողջ և զօրեղ մարդիկ են։ Նրանք մինչև ծերութեան հասակը պիտանի են լինում զինուորական ծառայութեան համար։ Զինուորական զորձը նրանք չատ չուտ են սովորում իրանց մեծ ընկերներից։ Զինուորական վարժութիւնները զօրքի մէջ կատարվում են երկու անգամ—առաւօտեան և արևի մայր մտնելուց առաջ, մեծ կարգապահութեամբ։

Հակառակ տարածված կարծիքի, Հոլց կարծում է, որ Թիւրքաց զօրքերը կատարելապէս ընդունակ են յարձակողական կռիւ մղել որպիսի թշնամու դէմ կուզէք։ Առհասարակ, գերմանական զինուորական գրողը հիացած է Թիւրքաց զօրքից։ Այդպիսի զօրքով, ասում է նա, հրաշքներ կարելի է գործել (??), եթէ նա ունենայ լաւ զեկավարներ։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԲԻԱՅԻՑ

Էրզրում, ապրիլի 26-ին

Յոյն-Թիւրքական պատերազմի պատճառով, մինչև այժմ արտասովոր ուրախութիւն մ'էր, որ կը տիրէր տեղւոյս Թիւրքերի մէջ. մէկը միւսին յաջորդող հեռագրալուրերը Յունաստանի մէջ Թիւրք զօրքերու մեծամեծ յաղթութիւնները կը նկարագրէին։ Սակայն յանկարծ հրաման ստացվեց, որ Բասէնի, Աշչկերտի և Այնթապի տան և երկու համիդիէ զօրագնդերն պատրաստ լինեն և 15 օրէն յետ Կ. Պոլիս մեկնեն։ Այդ հեռագիրը մահմէտականների ծիծաղն ու խնդումը աբխուր մատնոդութեան փոխեց։ Ոչ ոք չը գիտէ, թէ ինչ կերպ մեկնէ այդ յանկարծական երևոյթը։ Ոմանք կը հետևցնեն, թէ թերևս խաբուսիկ էր եւրոպական պետութեանց տաճկաց դէմ բռնած անտարբեր դիրքը, թէ յունական պատերազմը մի դաւադրութիւն էր Թիւրք կառավարութիւնը ապարէզ քաշելու համար, թէ այժմ միանամուռ սկսել են հարուածել դայն ամեն կողմէ և այլն և այլն...

Իսկ աւելի խորագէտ քիւրդեր կարծում են, որ Ռուսաստանը պիտի գայ Թիւրքիան բարեկարգելու համար, ուստի Կ. Պոլսէն եկած հրամանը զիրենք զինաթափ անելու պատրուակ է։ Այդ իսկ պատճառով դժկամակութիւններ ցոյց կը տան և չեն ուզեր տեղներից մեկնիլ։ Համիդէյի գլխաւորներ հեռագրեցին, որ ձիեր կը պակսին ճամբայ ելնելու համար։ Սակայն անօգուտ. հրամանը կրկնվեց աւելի խստիւ։ Այնթապի սիպկերներու աչիրի պարագլուխ Հիւսէյն-բէկը ուրախ է երթալ և պատրաստութիւններ կը տեսնի։ Միւսներ չեն ուզեր երթալ և ուզիթ կորոնեն հայերու հետ կռիւ բռնվելու համար, որպէս զի դրանով արգելվեն։

***

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 15 մայիսի։ Վոլոի հիւսպատոսների ծանուցման պատճառով, թէ երիտասարդ կայ, որ Թիւրքերը յարքունիս կը գրաւեն մաքսատան մէջ գտնվող ապրանքները, դեսպանները դիմեցին Բ. Դրան՝ առաջարկելով յետ կենալ ապրանքները գրաւելուց։

ՊԱՐԻԶ, 15 մայիսի։ Պետութիւնների յիշատակագրի մէջ, որ յանձնվեց Բ. Դրան, թոյլ կ տրվում թեսալիական սահմանի նոր որոշումն. սկզբունքով համաձայնութիւն է տրվում պատերազմական տուգանք առնելուն, չորոշելով նրա թանչանը, և մերժվում է կատարելապէս դաշինքները վերացնելու պահանջը, բայց կարելի է քննութեան ենթարկել մի քանի մասնաւոր որոշումներ, որոնք զեղծումների առիթ տուին։

ԼՕՆԴՕՆ, 15 մայիսի։ «Daily «Telegraph» լրագրին Ամէնքից հեռագրում են Կրետէ կղզու վրա եղած մի նոր դէպքի մասին. ծովագետները չէին թոյլ տալիս, որ Սանկիոս յունական զօրքերի հետ միասին հեռանայ կղզուց և յայտնեցին, որ նրան թոյլ կը տան գնալ միայն այն ժամանակ, երբ կը վերադարձվեն Ակրոտիրիի ապատամբների ձեռքում գտնված թնդանօթները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին Մեծ պալատի եկեղեցում, Ցարսկոյե-Սելօում, մաղթանք կատարվեց։ Ներկայ էին՝ Թագաւոր կայսրը, Մարիա Ֆեօդորովնա և Ալէքսանդրա Ֆեօդորովնա Կայսրուհիները, Մեծ Իշխանուհիները և Մեծ Իշխանները։

ՄՕՍԿՎԱ, 15 մայիսի։ Մայիսի 14-ին Մոսկվան ծանեց Նոցա Մեծութիւնների թագադրութեան առաջին տարեդարձը։ Մայրաքաղաքի բոլոր տաճարներում մաղթանքներ կատարվեցին։

ԼՕՆԴՕՆ, 16 մայիսի։ «Times» լրագրին հեռագրում են Ամէնքից, որ Ակրոտիրիի ապատամբները, գնդապետ Սայակոսի խորհրդով, յանձնեցին երեք թնդանօթ. մնացած երկուսը մնացին ապատամբների ձեռքում՝ կղզու ներսը։

ՊԱՐԻԶ, 16 մայիսի։ «Figaro», «Matin» և ուրիշ լրագիրներ, հաղորդելով որ Գերմանիան միացել է՝ դեսպանների կողմից Բ Դրան տուած յայտարարին, յայտնում է, որ այդ միացումը տեղի

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ԸՆԴՈՒՆԱՐԱՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ
Մ. Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆՑԻ

Հիւանդների ընդունելութիւնը սկսվելու է յունիսի 1-ից։ Ցանձն է առնում հիւանդ ատամներ բժշկել, լցնել, և ՆՈՐ ԱՏԱՄՆԵՐ շինել։ (№ 56) 2—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 28 մայիսի (յունիսի 2) ՍԻՐԿԱՍԱԻ չոգենաւը, նաւապետ ԳԱԲՐԻԷԼ և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից

Պակաս գներով։ Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէլմնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդակեանին, Սիմնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ա. Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մելխիոր Հերչինրոզերին։ (№ 16) 19—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

դրասենեակում և դրավաճառանոցներում վաճառվում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները։

83	ՀԱՄԼԷՏ Շեքսպիրի թարգ. անգ. Յով. խան Մասէհեանի.	— 75
84	ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄ. ՀԱՅՈՑ, մասն Ա. (Ա. Մ. Գարագաշեան)	— 1
85	Նոյն, Մասն Բ. (Գարագաշեան)	— 1
86	Նոյն, Մասն Գ. (Գարագաշեան)	— 1
87	Նոյն, Մասն Դ. (Գարագաշեան)	— 1
88	ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, բ. տպ. Ս. Պալասանեանի.	1 50
89	ԱԿՆԱՑ ՀՆՈՒԹԻՒՆՔ, Յ. Ճանիկեանի.	2 —
90	ՈՒՐԲԻՆՕԵՑԻ ՄԱՆՈՒԿԸ, Ոսդի զրույցներից.	— 10
91	ԿՕՇԿԱԿԱՐ ԵՐԱԺԻՇՏ, Տիւչեվի.	— 5
92	ԽՆՋՈՐԵՆԻՆԵՐԻ ԵՐԿՐՈՒՄ, Ոսդի զրույց.	— 10
93	ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ, հեղ. տիկին Մօնգօմերի.	— 60
94	ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅ, գ. տպ. Յ. Պարոնեանի.	— 40
95	ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ԲՈՒՍԲԱՆՈՒԹԵԱՆ, Ա. Քիշմիշեանի.	— 80
96	ՀԱՁԱՐԻՑ ՄԷԿԸ, Ն. Մամիկոնեանի.	— 60
97	ԻՆՁՊԷՍ ԿՈՒՋԷՔ, Շեքսպիրի, թարգ. Յ. խան Մասէհեանի.	— 50
98	ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ, բժ. Վ. Արծրունի.	— 50
99	ԿԵՂԵՔԻՉ, վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի.	— 10
100	ԳՈՌՈՋ ԱՐՄԱԻԵՆԻ, (Վ. Գարշինի։)	—
101	ԳՈՌՈՋ ԱԳԳԷՆ, (Վ. Գարշինի։)	— 5
102	ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ԳՈՐՏԸ, (Վ. Գարշինի։)	— 5
103	ՄԱՆԿԱԿԱՆ ԼՕՏՕ, պատկերներով.	1 25
104	ԳԵՏՆԱՓՈՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ, թարգ.	— 10
105	ՎԸԼԷԺ, Գիւի դը-Մօպասանի, թ. Լ. Մ. Ա.	— 5
106	ԱԿԱՄԱՑ ՄԱՐԴԱՍՊԱՆ, թարգմ. Տ. Յովհաննիսեանի.	— 15
107	ՄՈՒՖԼՈՒ, Ոսդի, թարգմ. Յ. Օհանեանի.	10
108	ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ, Թ. Լ. Մ.-Ադամեանի.	— 7
109	ՆԱՊԱՍՏԱԿ, Սլիվիցկու.	— 7
110	ԾԵՐՈՒՆԻ ՄԱՐԿՕՆ, Ի. Եակչիչի, թ. Մէզնիկեանի.	— 10

8—10

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, ըէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած։ Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինականայունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր) բնական գիտութիւն նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն։

Հասցէն. ТИФЛИСЪ. Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մօտ։

(№ 102) հ.) 10—10

Մեծ Արժանաւորութեան

ՀՈՏԱԻԷՏ ՋՐԵՐ

"Պարսկական Եասաման"

Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն

„Պարսկական Եասաման"

Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եասաման"

Սապոն „Պարսկական Եասաման"

Պոմադա „Պարսկական Եասաման"

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի։

(ամ. 15,30) (№ 73) 9—9

Զգուշացրէք կեղծուածներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպկինները, սեաթիւնը, դեղին բծերը, պուզիկները և պատկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապոն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։

կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ադմուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուբինովի և Գրիվնակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ։

(№ 11) 7—24

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ 1897—1901 թ. քառամեայ շրջանի համար ձայնաւորների ընտրութիւնը կը կատարվի կիրակի օր, ներկայ մայիսի 18-ին, ընտրողական ժողովում, որ տեղի կունենայ Թիֆլիսի ժողովարանի ամարային բնակարանում, Միքայէլեան փողոցի վրա, Թայիրովի այգում։ Ժողովի սկիզբը առաւօտեան ժամի 8-ին։

3—3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՈՍՍԻԱ"

Բարձրագոյն հաստատված 1881 թիւն

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 25.500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութիւնը ընդունում է։

ԿԵՍՆԴԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն դրամագլխի և եկամուտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ծերութեան ժամանակ, օժիտ աղջկերանց համար, ստիպենտիա երեխաների համար և այլն. առանձին չնաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգտին։

Առ 1-ն յունվարի 1896 թ. «ՌՈՍՍԻԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի 35.563 անձ,—91.406.948 ռուբլի գումարի։

ԴԺԲԱԽՏ ԴԵՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ինչպէս առանձին անհատների նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործարաններում ծառայողների, բանուորների և այլն՝ նաւազեցրած վճարներով՝ չնորհիւ զիվիդենտի, որը վճարներից դուրս է հաշվում։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի (շինութիւնների, մեքենաների, ապրանքի, կահ-կարասիքի և այլն)։

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն.

Ապահովագրութիւն ընդունվում է Ս. Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) *Թիֆլիսում Սերգիյէվսկի փողոց, № 6. և զանազան քաղաքների գործակալութիւններում.*

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ ժամանակ, երկաթուղիով կամ չոգենաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կայարաններում և ծովամատոյցներում։

(№ 89) (;) 37—52

ԷՕԺԷՆԻԱՑԻ ՊԱՍՏԱ

երեսի մորթը կակղեցնելու համար պօմադ. ոչնչացնում է յուտով երեսի վրա եղած կարմիր բիծերը և մունները. այս միջոցը առաջ է բերումնաև երեսի թարմութիւն և գեղեցկութիւն։ Գինը 1 ր. 60 կ.

Elixir Mélange

Մաղերը աճեցնելու և գլխի թեփը ոչնչացնելու հեղուկ։ Գինը 2 ր.

ԷՕԺԷՆԻ ՊՈՒԴՐԱ

սպիտակ, վարդագոյն և բաչել (թուխ գէմք ունեցողների համար) նա ամուր կերպով պահպանվում է մորթու վրա և բոլորովին անկատելի է աչքի համար, մորթուն տալիս է նոյնպէս խիստ կակղութիւն, առաձգութիւն և քնքշութիւն։ Գինը և 1 ր. 20 կ. 1 ր. 50 կ.

ԷՕԺԷՆԻ ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին բնական, վարդագոյն գոյն որ ոչ ցերեկվայ, ոչ ելէքտրական լոյսից չէ փչանում։ Գինը 1 ր. 50 կ.

ՄԻՐՏԱՑԻՆ ԲԱԼԶԱՄ

(պուդրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քնքոյշ կակղութիւն և մարմարեանման մաքրութիւն։ Նա ոչնչացնում է արևհարքը, մունները և մորթու վրա եղած ամեն մի անհարթութիւն և տգեղութիւն։ Գինը 1 ր. 75 կ.

ՔԻՆԱ-ԳԼԻՅԷՐԻՆԱՑԻՆ

գլխի պօմադ Պէրուանական բալզամով եփած՝ մաղերը սնդացնելու, խտացնելու և աճեցնելու համար։ Գինը 2 ր.

ԽԽՈՒՆԶԱՑԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են զարմանալի սպիտակութիւն և ճկունութիւն։ Գինը 1 ր. 30 կ.

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԷՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Րիս-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձևը, ամրացնում է նրանց և նպաստում է նրանց արագ աճման։ Գինը 75 կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Րիս-Գուտման), սև, չագանակագոյն և խարտեաչ։ Այդ ներկով ներկված մաղերը պահպանում են իրանց գոյնը 6 չաբաթվայ ընթացքում։ Գինը 3 ր.

Ծախվում է բոլոր դեղարարական և կօսմէտիական խանութներում։ Գլխաւոր պահեստը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղարարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիս և Բագու։

(№ 26) 29—50

Дозволено цензурою, Тифлисъ, 16 мая, 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.